

„Droschak”
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse: 3, rue de la République
REDACTION DU JOURNAL
„Droschak”
GENEVE (Suisse)
A. R. V. BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ” ՕՐԳԱՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Բէդէրիանի որդի ԱբտիւլբաՏաման-բէյի կոչը քրդերին, որ տպագրում ենք «Դրոշակի» ներկայ համարում, թելագրում է մեզ մի քանի խորհրդածութիւններ հայ-քրդական յարաբերութիւնների մասին:

Քիւրդ-հայկական համերաշխութեան հարցը նոր երևոյթ չէ մեր կեանքում: Ներսէս Արժապետեանի, Մկրտիչ Խրիմեանի հայեացքները և նրանց որոշ գործնական քայլերը այդ սահմաններում յայտնի են շատերին: Բաժնի մշտական քարոզները, Սրբանձատեանի կարծիքները և դրա հետ շատ ուրիշների երբեմն մոլեռանդ հաւատը, երբեմն բաւականաչափ հիմնաւորած համոզումները՝ վաղուց են շրջում մեր հասարակութեան մէջ: Վերջապէս անցեալ տասնամեակում քրդերի հետ դաշնակցելու նպատակով հայ յեղափոխականների տեղ-տեղ արած փորձերը՝ նոյնպէս արդէն դուրս են գաղտնիքի՝ շքանից:

Մենք ոչ միայն տրամադիր չենք ժխտելու անցեալից արդէն մեզ ժառանգած այդ ուղղութիւնը, այլև պատրաստ ենք այսօր ընդունելու — եթէ կամենում էք — այդ ուղղութեան յաղթանակի մի նոր արտայայտութիւն: Այն ինչ մինչև այժմ քրդերի հետ համերաշխութիւն հաստատելու միտքը յղացել և հետաքրքրութեան առարկայ է եղել միայն հայերի մէջ, վերջին տարիներում տեղի ունեցած մի քանի փաստեր — օրինակ, 1898 թ. «Դրոշակի» № 6-ում ու 1900 թ. № 1-ում տպած յօդւածները, ինչպէս նաև ԱբտիւլբաՏաման-բէյի ներկայ կոչը — ցոյց են տալիս, որ նոյն միտքը հող է գտել և արդէն կեանքի վերածւելու ճիգեր է անում նաև քիւրդ ինտելիգենտների մէջ: Միևնոյն գաղափարի վրայ աշխատողներ ուրեմն երևան են գալիս երկու կողմից՝ փոխանակ մի կողմի, և ինքըստինքեան հաւանական է դառնում այն ենթադրութիւնը, որ այսուհետև հայ քրդական համերաշխութեան խնդիրը կարող է զարգանալ համեմատաբար աւելի նպաստաւոր, աւելի յաջող պայմաններում:

Սակայն՝ չնայելով երևոյթի բոլոր ուրախալի բնութարաններին, մենք չենք կարող ծածկել մեզանից, որ քրդ-հայկական դաշնակցութեան խնդիրը ամէն անգամ, երբ նա հրապարակ է գալիս, մեզ դնում է մի դրութեան մէջ, որ ֆրանսիական ժողովուրդը բնորոշում

է իր մի առածով, այն է՝ «parler de la corde dans la maison d'un pendu» (խօսել պարանի մասին մի կաւածի տան մէջ):

Եւ իսկպէս. եթէ հարցնելու լինեք մեզ թէ ո՞ւմնից է հայ ժողովուրդը — գոնէ XIX դարի քսանական թւականներից — օրէօր, ամսէ ամիս, տարեց տարի աւելի տուժել, այնչափ տուժել, որչափ նա չէ տուժել անմիջապէս ոչ մի ուրիշ ազգութիւնից, դժւար թէ գտնւի մէկը, որ չպատասխանէր՝ քրդից: Եւ ահա այդ մշտական մեր թշնամու, մշտական մեր աւերողի, մորթողի, անպատուողի, տանջողի, մեր հայրենիքից մեզ ցիրուցան անողի, մեր արիւնը ծծողի, մի խօսքով հայութիւնը կախ տուղ այդ պարանի մասին է, որ մենք հայերս պէտք է խօսենք-լսենք: Գրութիւնը աւելի քան անողորմ է. և իհարկէ պահանջում է ամենայն զգուշութիւն խնդիրը ըստ կարելոյն սառնասրտութեամբ լուսաբանելու համար:

Միանգամայն անհրաժեշտ է պարզել, որո՞նք են այն պայմանները, այն պատճառները, որ հիմնաւորում են քիւրդ-հայկական հակառակութիւնները, և կարելի՞ է արդեօք դրանց առաջն աննել և ի՞նչ միջոցներով:

Ապրելով լեռներում և սարահարթերում, ուր երկրի բնական հարստութիւնները և կիսաթափառական-խաշնարած կենցաղին յատուկ սահմանափակ արդիւնաբերութիւնը չեն պայմանաւորում քրդերի համար տպահով կեանք, նրանք ներկայանում են գոյութեան կուռում իբրև թոյլ տարր: Այլ, պանիր, միս, բուրգ, բրդի գործւածքներ և քիչ քանակութեամբ հաց, — ահա այն միջոցները, որ արդիւնաբերում են քրդերը: Արհեստի բազմազան արտադրութիւններ, բրինձ, աղ, շատ յաճախ հաց, մրգեր ևլն — այսինքն մի շարք առաջնակարգ կենսական պիտոյքներ — նրանք պէտք է ստանան դրսից, ուրիշ ժողովուրդներից, և դրա համար նրանք չունեն ուրիշ միջոց քան կողոպուտ և սպանութիւններ, որոնք տարիների ընթացքում դարձել են «քրդական արդիւնաբերութեան» մի անհրաժեշտ, համարեա մի «բնական» մաս: Իր զարգացման շաղկում քիւրդը հազիւ է բարձրացել մինչև նահապետական ցեղական սկզբունքը: Ցեղի շահը — ահա ինչն է ղեկավարում նրա կեանքը: Չրկայ այդտեղ ազգային գաղափար, ժողովուրդական մի ամբողջութեան հասկացողութիւն: Չրկան այդտեղ վերացական ընդհանուր սկզբունքներ ոչ սպանութիւնների, ոչ յափշտակութիւնների մասին թէ հասարակական և

Թէ մասնաւոր կեանքում, ճիշդ այնպէս, ինչպէս քաղաքակիրթ ազգերի մէջ պետական ինքնապաշտպանութեան տեսակէտից ընդունուում են պատերազմի սպանութիւններ, յափշտակութիւններ ևն: Այն ամենը, ինչ պահպանուում է ցեղը, յաճախ նոյնիսկ անհատը — լաւ է, և ինչ կարող է վնասել նրանց՝ վատ: «Յերակից» և «այլացեղ» համանիշ են «բարեկամ» և «թշտամի» խօսքերին, թէկուզ այլացեղը լինէր նոյն քրդական ազգութիւնից: Առ հասկանալի է, որ յանցանք չկայ, որ քերական շարդարացներ, եթէ դա կատարուում է այլացեղի վրայ: Այդ բաւական չէ: Կողոպուտ և սպանութիւնները, իբրև ցեղի և անհատի բարեկեցութեան նպաստաւոր միջոցներ, նոյնիսկ առաքինութիւն են համարուում և դո՛ւստանուում, փառաբանուում, երգուում են իբրև կարիճի վայել յատկութիւններ:

«Ո՛չ բարեկեցիկը, ո՛չ բէղունները, ոչ հապէշները և ո՛չ էլ պատագօնները չեն գերազանցում քիւրդ պատերազմատէր ցեղերին իրենց աւազակաբարոյութեամբ և այդ բնազգման բաւականութիւն տալու արեւստով», — ասում է Ելիզէ Ռեկլին:

Այդպիսով քաղաքակրթութեան պատմութեան մէջ ինչ տեսակի բաժանումների էլ հետևելու լինենք — ընդունենք Յայլըրի, Վօրգանի թէ Լիպերտի սիստէմները՝ այդ միևնոյն է — քրդերը, իբրև մեծ մասամբ դեռ թափառական-խաշնարած և ցեղական սկզբունքով ապրող ժողովուրդ, պէտք է դասաւորուեն մարդկային քաղաքակրթութեան յայտնի շրջաններից՝ բ ա բ բ ա ռ ո ս ա կ ա ն շ ը ջ ա ն ու մ: Բարբարոսական կենցաղի մի ժողովրդի հետ է ուրեմն, որ պէտք է ապրեն հայերը, նրանց անմիջական հարևանները, որոնք սակայն վաղուց են ոտ կոխել ք ա ղ ա ք ա կ ը թ ա կ ա ն կենցաղի շրջանը: Այս անբախտ դ ու գ ա դ ի պ ու թ իւ ն ը մի երկրում երկու տարբեր քաղաքակրթական կենցաղների — ահա մէկը այն հիմնական պատճառներից, որոնք պայմանաւորում են քրդական ու հայկական շահերի և տեսակէտների ահադին տարբերութիւնը:

Միևս նշանաւոր պայմանը, որի շնորհիւ անօրինակ կերպով սրւում են քիւրդ-հայկական յարաբերութիւնները և որի ահռելի ապացոյցը մենք տեսանք մեր օրերում, — դա այն տ ա բ ա ի բ ն է, որին հետևում է թ իւ ը կ ա ու վ ա ը ու թ իւ ն ը հնուց ի վեր:

«Որպէս զի քրդերը հեռու մնան անկախութեան ձգտումից, կառավարութիւնը աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով: Այդպէս, օրինակ, նա դրդում է քրդերին Քիւրդիստանում ապրող նաստորականների դէմ, ինչպէս նաև մահմեդականներին զինում է քաղաքացիների դէմ, իսկ վերջիններիս՝ եղիզիների և քրդերի դէմ: Նա այգպիսով առաջ է բերում խռովութիւններ այն միակ նպատակով, որ իրեն պահի գերագոյն իշխանութիւնը... և հպատակ աղանդները շփանան ընդհանուր թշնամու գէմ»:

Այս դիտողութիւնները մեր գանում ենք դերմանացի Էվայգեր-Աէրիէնֆելդի մի աշխատութեան մէջ, որ հրատարակած է 1875 թւին այն հետախուզութիւնների հիման վրայ, որ 1872-1873 թւականներին ինժեներ Չերնիկի ղեկավարութեամբ արւել են բուն Քիւրդիստանում (Հիւսիսային Միջագետք): Աւստի կեն քրդերի ձեռքով կատարած եղիզիների ջարդը 1830 թւին կամ 1846 և 1849 թւականներին Մուհամեդ-փաշայի (Կիրիտի) դրդմամբ նաստորականների կոտորածը, ինչպէս նաև 1860 թւին առհասարակ քրիստոնեաների ջարդը, երբ — ըստ միևնոյն հեղինակի — «Թիւրքերը գործում էին դրուզների հետ միասին, գրգռելով նրանց ֆանատիկութիւնը և արտայայտելով վերին աստիճանի նենգամտութիւն ու կեղծաւորութիւն», — ում յայտնի են, ասում ենք, այս փաստերը, նրանց մէջ տարակոյս չէ կարող լինել ինժեներ Չերնիկի իրաւացի դիտողութիւնների մասին: Յատկապէս հայերիս վերաբերմամբ՝ տանձկական նոյն տաքաբլը, իհարկէ, արտայայտեց աւելի ստեղծական շահերով: Բողոքիս յայտնի են այն ներգործական խրատականքները քրդական բոլոր խժգժութիւններին, որոնք ուղղւած են եղել հայերի դէմ: Պատկերը լրացնելու համար միայն յիշատակենք 1829, 1855 և 1877 թւերի հայկական մեծ աւերումները քրդերի ձեռքով և վերջապէս «համբիէի» կազմակերպութիւնը, որի կոչումը այնքան ազետաբեր կերպով արտայայտեց 1895 և 1896 թւերին:

Միևնոյն «վերին աստիճանի նենգամտութեան և կեղծիքի» սէստէմին են հետևում և պիտի հետևեն նաև ուղևորը, լուսաբանելով հայկական շարժումը ճիշդ և ճիշդ թիւրքերի պէս, այսինքն իբրև մի ձգտում, որ նպատակ ունի եւրոպական պետութիւնների միջնորդութեամբ ստեղծել սեփական հայկական թագաւորութիւն և քրդերին ենթարկել ստրկական վիճակի: Այդպէս, օրինակ, ուսս սպակոյտի գնդապետ Աարցօվը, որի ատելութիւնը դէպի հայկական խնդիրը հասնում է կուրուութեան նոյնիսկ «աններև» փաստերի առաջ, Կովկասի՝ կայսերական աշխարհագրական ընկերութեանը տւած իր զեկուցման մէջ ասում է.

«Օտար, մեծ մասամբ անգլիական դրդումների (?) ազդեցութեան տակ, վերջին տարիներում քաղաքների հայերի և հոգևորականութեան մէջ սկսել է շարժում հայկական անկախութեան վերանորոգման և վաղուց չքացած Հայաստանի վերածնութեան համար... Հասկանալի է ատելութեան այն զգացմունքը, որ ծագեց քրդերի մէջ դէպի հայերը. այն միտքը, թէ նրանք, որ կազմում են երկրի (?) ազգաբնակչութեան մեծամասնութիւնը, կը լինեն ենթարկւած (?) խորապէս արհամարաղ և ոչ-պատերազմատէր փորձամասնութեան (?) բոլորովին անտանելի է ամեն մի մահմեդականի, մանաւանդ քրդի համար»:

Բայց հայկական խնդիրը իր արմատում խեղդելու կողմնակից գնդապետը քրդասիրութիւնից չէ, որ խօսում

է հայերի՝ դէմ: Ահա բառ առ բառ նրա խօսքերը քրդերի մասին, որոնց վրայ նա նայում է ըսկ միմիայն առևտական ա ի ր ա պ ե ա ա կ ա ն գ ի ա ս լ մ Ե ր ի ա ե ս ա կ է ա ի յ, ինչպէս տաճիկները՝ տաճիկական դերիշխանութեան տեսակէտից:

«Քիւրդերի պատմութեան տեսութիւնից կարելի է հանել մի եզրակացութիւն, որ շատ կարևոր է դնահատելու համար այս կամ այն կ ա ր ե լ ի գ ո Ր ծ ո Ղ լ թ ի ւ Ն ն Ե ր ը Քիւրդիստանին մօտիկ կրկիրներում՝ ծագած քաղաքական բարդութիւնների ժամանակ: Քրդին շատ քիչ է ծանօթ հայրենասիրութեան գրգռմանը այն մտքով, ինչ մտքով հասկանում ենք մենք. հաւատարմութիւն տաճիկ կառավարութեան ամենևին չունեն, բայց բաւական զօրեղ է զգացմունքը դէպի ցեղը և նրա զլխաւորը»:

Եւ էլի

«Քրդերը շուտափոյթ զենքի դիմելով՝ նոյն սրագութեամբ էլ ստուգում են, հէնց որ դիմադրութեան են հանդիպում: Աղոյզուտի հոգսը նրանց մէջ դերականցում է նոյնիսկ հաւատարմութիւնից դէպի շէյխը ջալալի քրդերը հեռուում են շիա Թէքմուր-աղային ընդդէմ իրենց ցեղակցի, որը բացի գրանից՝ շրջապատւած է կրօնական հմայքով: Մի խօսքով՝ քրդերի բոլոր գործողութիւններում երևում է ոչ թէ գիմնացիւն և համարձակ մի ժողովուրդ, այլ վայրենի կողմատիշներ, որոնք անընդունակ են սեւէ երկարատև ջանքերի և պատրաստ են ամէն բան զոհել վայրկենական, գրոշային շահին»:

Եւ իհարկէ այդ «վայրկենական, գրոշային շահին» բաւարարութիւն տալու համար էր որ 1829 թիւն առևտ-տաճիկական պատերազմի ժամանակ կոմս Պասկեվիչը, համարելով Քիւրդիստանի խաղաղութիւնը պայերազմի յաջողութեան գլխաւոր պայմաններից մէկը, թողաւութիւն ստացաւ 100 հազար ոսկի ծախսելու քրդերին ընծաներ բաժանելու նպատակով:

Վերջապէս չէ կարելի անտես անել մեզ հետաքրքրող հարցում՝ նաև կ ր օ ն ի նշանակութիւնը:

* Շատերն են ժխտում կրօնի դերը քիւրդ-հայկական յարաբերութիւններում: Բայց մեզ թւում է, որ մի կրօն, որի մէջ գարերի ընթացքում ամբողջ ել է մահմեդական աշխարհի համարեա բոլոր մտաւոր-բարոյական կեանքը. մի կրօն, որը դերագոյն ղեկավար է հանդիսացել մահմեդական պետութիւնների ամբողջ քաղաքական կազմի մէջ: մի կրօն, որ «դեմաւոր» խօսքով այնքան խստօրէն բաժանում է ամբողջ երկրագնդի այլակրօն տարրերը «միւսիւրմուններից» մի կրօն, որ Մարգարէի անունով կոչում է իր հօտին—«պատերազմեցէ՛ք անհաւատներին հետ մինչև կը վերանայ ամենայն մի դիմադրութիւն, մինչև Ալլահի հաւատը կը գառնայ միակ կրօն աշխարհիս վրայ»: մի կրօն, որ «հալալ» է անում իր հետեւողներին այլակրօնների տրիւնը և աւար-կողոպուտը. մի կրօն, որի պատգամները այնքան համապատասխանում են մանաւանդ քրդերի բոլոր վայրենի բնազդներին,— մեզ թւում է, ասում ենք, որ այդպիսի մի կրօն չէ կարող չունենալ իր որոշ դերը քիւրդ-հայկական հասկանալութիւնների խնդրում: Այդպէս են նայում հարցին նաև Տաճկաստանը ու իսլամը մօտից ուսումնասիրած բոլոր հեղինակները, սէսած մեր անուհի Շաբնէից մինչև Ինգլիզմորգ (Տաճկաստան և Թանգրանթ), Քրին (Հայկական ճգնաժամը) ու շատ ուրիշներ:

Ահա, մեր կարծիքով, այն գլխաւոր գործօնները — քրդերի բարբարոսական կենցաղը, տաճիկ ու առևտական կրօնը — որոնք սաստկացեց գժեարացնում են և պիտի դեռ ևս գժեարացնեն քիւրդ-հայկական համերաշխութեան գործը:

Հետևեալ յօդածում կը քննենք երկրորդ հետաքրքիր հարցը, որ մենք դրինք վերև:

Կ Ո Ջ Ք Ի Ի Ր Դ Ե Ր Ի Ն

Ներկայ կոչեց սպագրած քրդերէն և թիւրքերէն լեզուներով, 500 օրինակ աղարկւած է «Գրօշակում» խմբագրութեան սրանից դեռ չորս ամիս առաջ: Այդ կոչը, որ մեզ հաճելի է համարել արձագանք նոյնաբոլորը քիւրդ-շարժման, մենք յարմար գատեցինք հրատարակել «Գրօշակում» միայն այժմ, երբ բոլոր օրինակները արդէն աղարկւած են Թրքահայաստան քրդերի մէջ տարածելու համար:

Քիւրդեր.

Ինչպէս որ մարդս ստիպւած է միջոցներ պատրաստել իր անձնական պատուով իր գոյութիւնը պահպանելու համար, այնպէս այլ քանի որ միսմինակ անկարելի ըլլալով սպրիլ, բնականէն հարկազրուած է ընկերականօրէն անարի նա պէտք չէ ինչայ էրբն պատկանած հասարակութեան համար աշխատիլ պաշտպանել անոր համբաւն ու պատիւը, որ կեանքէն աւելի սուրբ է սպահնիլ ընտանիքի անդամներուն սպազան և իր հայրենի սիրած հողը պաշտպանել թշնամիներուն դէմ:

Ասոր համար ամէն ժողովուրդ իր ազգային պաշա-

պանութեան տեսակէտին համեմատ շարժելու է: Գուրբ, շատնց է, ձեզ քաղաքակրթութեան ամէն տեսակ յուսալիմութիւններէն, դիտութեան բարիքներէն, ազատութեան երջանկութեանէն զրկող և նենդօրէն գործադրած չարագործութիւններով վերջապէս աշխարհի առջև ձեր համբաւն ու պատիւը արատաւորող Արդիւ Համիդին և անոր ընտանոք պաշտօնիտներուն աշխատիլ ծառայելէն գատ ուրիշ բան չէք ընէր: Փատիշահին հեռուոր նպատակը ձեզ ձեր սպիտութեան մէջ պահել է. ասոր համար, ձեր այդ միջակէն օգուտ քաղելով այնքան չարիքներու փոխարէն՝ շուններուն իսկ չընդուն-

նած մէկ-երկու պատւանշանով ձեզ կը փայփայէ: Դուք չէք հասկնար որ այդ նշանները և պատւանշանները ձեր ազգային արժանապատուութեան և ձեր ապագայի կորուստին գինն է:

Քիւրդեր. Արևելքի ցեղերուն մէջ էն կտրիճը, էն խելացին և էն ժրաջանն էք. ան հողի պաշտպանութեան համար, որուն վրայ ձեր երիտասարդութիւնը անցուցած էք, ժամանակէ մը ի վեր ի՞նչ ծառայութիւն մատուցիք:

Ձեզ բնաջինջ ընել ուզող փատիշահին ձամբուն այնքան հոգիներ զո՞հ տուիք.— ի՞նչ ըրիք Քիւրդիստանի պաշտպանութեան համար: Ձեր երկիրը կարգ մը աւազակ պաշտօնեաներու կերուածարակ ձգելով և անձամբ անոնց ստրուկ ծառայութիւններ ընելէ զատ ի՞նչ ըրած էք:

Ան թագաւորը, որուն խալիֆայ է ըսելով հնազանդիլ ուղեցիք, այնքան տգէտ էք, որ չէք իմացած թէ բռնակալ և գահէն վար առնելու արժանի մէկն է: Փատիշահին խա իֆայ անունին տակ կատարած չար բռնութիւնները ձինկիզ-խանին ողորմիս հանել կուտան: Աշխարհք արարած գիտէ այս բաները, դուք միայն դեռ չէք իմացել:

Ան ինքնիրեն խալիֆա թող ըսէ, ինչ կըսէ ըսէ: Ձեր մասին ի գործ դրած բռնութիւններուն ոչխարի պէս հնազանդելու և իւրաքանչիւրը մէյմէկ ահագին փորձանք եղող պաշտօնեաներու կեղեքումներուն ծառայակիր ըլլալու ինչո՞ւ ստիպւած ըլլաք:

Ձէք գիտեր որ բռնակալին հնազանդելը ամբարշտութիւն և Աստուծոյ պատիժը հրաւիրել է: Այնքան պզտիկ ազգեր, յարատե ջանքերու շնորհիւ, վերջապէս իրենց համար պատուհաս բռնակալի անօրէն դիտումներէն իրենց ընտանիքը ու ազգութիւնը ազատեցին ու երջանիկ եղան: Դուք փոխանակ այդ տեսակ ազգերէն օրինակ առնելու, իրար կըսպանէք և այսպիսով ուժերնիդ թուլացնելով, ձեր էն մեծ թշնամի փատիշահի բռնակալութեանը կաշխատիք աւելի ու աւելի ասպարէզ տար:

Միթէ՞ թող կուտայ ձեր ծանօթ վեհանախարհութիւնը ու քաղութիւնը, որ սպաննէք կարգ մը անմեղ հայերու կիները ու երեխաները: Մեղի կը վայլէ՞ այսքան խաբարի փատիշահի մը չարագործութիւններէն, որ ձեր արարքներուն համար աշխարհի առջև ձեզ վայրենի կը ներկայացնէ:

Կարգ մը անպաշտպան հայեր սպաննելով՝ չէ՞ որ դուք կը քանդէք ձեր հայրենիքը և ձեր տունտեղը: Ձեզ աւերի ու աւարի մղող վաղիներ, միւթէսարիֆներ, գայմագամներ ձեր ձեռք բան ձգեցի՞ն արգօք, և մանաւանդ ինչ որ ունէիք առնելէն զատ չէ՞ որ ձեր պատիւն ալ առին: Աստուծոյ և Մարգարէին արգիլած սպանութիւններէն, թալանումներէն օգուտ քաղելու չափ տգէտ գտնեցաք: Քանի մը տարի առաջ փատիշահին հրամանով զան գուժարած ժողովն մը մէջ հայերը ջարդելու որոշում տրւելով, հանգուցեալ Շէյխ Իպատուլահը, որ ներկայ էր, վեր կացաւ և ըսաւ. «Աստուծոյ կամքին հակառակ է այսպէս հայերը ջարդել և այս իրարէն ընող փատիշահը բռնաւոր և անիրաւ ըլլալուն, ոչ միայն անոր հրամանին հնազանդելու չէ, այլև նոյնիսկ արժանի է գահընկէցութեան: Անոր բուն նպատակը նախ քիւրդերուն ձեռքով հայերը սպաննել և յետոյ բանակին ձեռքով քիւրդերը ջարդել տալ է՞»: Աս ըսելով հեռացաւ ժողովէն: Հանգուցեալ Շէյխին այս մարգարէահաճոյ շարժումը ինչո՞ւ ձեզի գեղեցիկ օրինակ մը չէ եղած: Դուք, իբրև ցեղակից և միւսնոյն երկրի զաւակ, բնականաբար պարտաւոր էք բարեկամաբար

ապրիլ հայերուն հետ, և այս բնական անհրաժեշտութեան պատճառով՝ չէ՞ որ այսքան ժամանակէ ի վեր առանց կուրի և անհամաձայնութեան անոնց հետ լաւ յարաբերութեան մէջ կապրիք: Այսքան բնական և հինաւոր յարաբերութիւնները Ազգիւլ Հափդի չարագործութեամբ ոտնակոխ ընելով, հայերը ջարդելիդ, այս և հանդերձեալ աշխարհի մէջ մեծ պատասխանաւորութեան տակ կը ձգէ ձեզ: Եթէ դուք անոնք չարչարէք և հարստահարէք, հարկաւ հարստահարուածին վրէժնիդը Աստուծը ձեզի անպատիժ չի ձգեր:

Քիւրդեր. ալ հերիք է այսքան աղէտ ու ձախորդութեան պատճառ եղող անվտուկութիւնը և թշուառամտութիւնը: Ձեր նախահայրերուն պատիւն ու համբաւը նամերտութեան հողովը ծածկեցիք: Չի ձանձրացա՞ք դեռ ձեր վրայ իշխող պաշտօնեաներուն ձեռքը յափշտակութեան, մարդասպանութեան և աւազակութեան գործիք ըլլալէ:

Այս ամօթարատէն ի՞նչպէս պիտի մարքէք ձեր ազգային պատիւը: Աշխատեցէք ձեր հին ազատութիւնը ձեռք բերելու և ձեր անցեալ երջանկութիւնը ետ դարձնելու: Երեք տարի է, ձեզ արթնցնելու և ձեզ աշխարհին ձանջնցնելու համար, Պոսէն այդ նպատակով ազատ Եւրօպա անցայ և հոն մեր ազգին ամէն կերպ յանաջադիմութեան համար «Քիւրդիստան» անուն լրագիր մը հրատարակեցի: Այն մեծամեծներուն, որոնց հետ կը թղթակցիմ, խօսքերնուն հնազանդեցէք և անոր համեմատ շարժեցէք: Յարգեցէք և մտիկ ըրէք ձեր իւլէմաները, երևելիները: Կըսպասեմ որ ժամանակը պայ, ինչ ալ լի ահ (առաջ Աստուծ) մօտիկ ժամանակէն անձամբ կուգամ և ձեզի հետ մէկտեղ կաշխատիմ: Այս անթիւ հարկ եղած ջանք ու խնամքը դուրս հանելու համար՝ գլխաւորապէս քիւրդ շէյխերը և մեծամեծները կը հրաւիրեմ. Քիւրդիստանի մէջ յարուցած գիշտութիւններուն մեծապէս անոնք պատասխանատու են: Յգէտները, փոքրերը դժբախտ են, անոնց ալ մեղքը մեծերուն, գործի դուրս կեցողներուն վիզն է: Իրերու վիճակին ծանրակշռութիւնը հասկնալով՝ անոր շարունակութեան չաշխատիլ մեծ յանցանք է: Մանաւանդ որ փատիշահին տւած պատւանշաններուն ու աստիճաններուն համար այս չարագործութիւններուն գործիք ըլլալ աններելի ոճիր է: Ձեր տեսած բռնաւոր հարստահարութիւններուն վերջ մը գնելու համար, հայերը ձեզի ամէն կերպով աջակցելու կազմ պատրաստ են: Համերաշխութեան ու համաձայնութեան մէջ մի թերևորաք: Այսպիսի վիճակի մէջ Աստուծոյ յաջողութիւնը հետեւնիդ է:

1318 Ամսական ՊԵՏԵՐՍԱՆ-ՊԷՅԻ ՈՐԴԻ Զիզատէ 11 Կնեք ԱՊՏԻԼՐԱՆՍՍ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

6 յունիս

Տեղական լրտեսներու փութաջան գործունէութեան ու, ասոր իր հետեւնք, ցոյց տւած քաջագործութիւններու և շահատակութիւններու մասին ոչինչ չենք ուզեր գրել որովհետև ատոնք այնքան յայտնի են ամէն մարդու: Մենք պիտի բաւականանանք մասնանիշ ընելով միայն անոնց զոյց տւած եռանդը՝ իրենց սիրելի վեհապետ-

բունակալին դէմ՝ դաւադրող երևակայական փնասակար մարդեր ստեղծելով՝ զանոնք բանտ առաջնորդելու մասին։ Լրտեսներու այս ազնիւ պաշտօնէութեան փոխը, իրենց տիրոջ անյագ ու վարագ կիրքերը գոհացնելու համար զոհեր պատրաստելու գործունէութեան մէջ, այնքան սիրելի ու շահաւէտ է իրենց համար, որ չեն վարանիր, նոյնիսկ քիչ թէ շատ կամ առ ահի իրենց բարեկամութիւնը և երբեմն-երբեմն ալ նիւթական նւէրներ մատակարարող անձերը մատնելու ելելը։ Այս կարգի դէպք մը պատահեցաւ վերջերս, որուն, ցաւ է ըսել տխուր դերակատարը հայ մըն է, կամ, արդար է ըսել, մէկը՝ որ սխալմամբ հայ ծնած է փոխանակ սուլ-թանի մէկ հարձք ծնելու։

Նշանաւոր է հայ ոստիկան-լրտես Գրիգորը չէ թէ իր մեծ յատկութիւններուն համար, այլ շնորհիւ իր կնոջ—Օրթագիւղի քահանայի մը աղջիկ—որ պատիւ ունեցած է ոստիկանական նախարար նախկին Շէֆիզ պէյի, այժմ Շէֆիզ փաշայի, տղուն հոմանուհին ըլլալու, ինչ որ արհամարելի առաւելութիւն մը չէ Թիւրքիոյ մէջ։

Այս լրտես Գրիգորը կերպով մը ծանօթութիւն կը հաստատէ ծանօթ գրաւաձառ Վահան Չարդարեանին հետ։ Գրիգոր չմոռնար Վահանէն դրամ կորզել պարբերաբար՝ փոխառութեան քողին տակ։ Կուգայ սակայն ասան մը, ուր Վահան Չարդարեան ալ չուզեր ունէ դրամ տար Գրիգոր կը բարկանայ և վրէժ լուծելու համար՝ օր մը, Վահանի դատարան մէկ վարկեանէն օգտուելով՝ գիրքերէն մէկուն մէջ կը սպրդեցնէ հայ թագաւորներու մէկ քանի լուսանկարներ, որոնցմէ հարիւրներով կը ծախին Երեսուէր Գալուրըմ։ Հրէայ գրաւաձառներուն մօտ։ Քիչ ետքը ոստիկաններ կը ձերբակալեն Վահանը և բանտ կը տանին։ Այս յաջող ձեռքէն յետոյ, Գրիգոր անմիջապէս կը դիմէ Վահանին եղբորը՝ Պիմէն Չարդարեանին՝ պահանջելով անկէ 5 ոսկի՝ գործը առանց քննութեան ու բարեկամաբար վերջացնելու համար։ Պիմէն կը մերժէ։ Հետեւեալ օրը Գրիգոր մէկ երկու ոստիկաններու հետ կերթայ գրատունը խուզարկելու։ Երկար յոգնութիւն չեն կրեր։ Գրիգոր անմիջապէս կը ցցնէ ոստիկաններուն գիրք մը՝ ըսելով. «Սա բացէք, նայինք»։ Պատկերները երևան կուգան... ոճիրը հաստատուած է։ Գիրքը կը ցցեն Վահան Չարդարեանին, որ կը հաստատէ իրն ըլլալը, բայց պատկերներ չըձանջնար։

Այս դէպքը պատահած է 1901 յունւար 1-ին։ Մինչև այսօր Վահան կը տանջուի թիւրք բանտերու մէջ՝ ամբաստանուած իբր խռովարար, յեղափոխական, փնասակար անձերու հետ յարաբերութիւն, թղթակցութիւն ունեցող և արգիւտած գրքեր, պատկերներ ծախող Գեո յայտնի չէ թէ ի՞նչ պիտի ըլլայ խեղճ Վահանին վիճակը։ Գործը մինչև եպարքոսութեան ելած է. անկէ ալ թերևս իրատեղով մը անոր սև ձակատագիրը վճռուի։

*

Հանրածանօթ է արդէն, որ հոս, Թիւրքիոյ մէջ, սուլ-թանին շուրջը, նախարարներու և առհասարակ բարձրագոյններէն մինչև ամենայնօրին պաշտօնեաներուն մէջ գող-աւազակ, նենգամիտ և երկիր ու հայրենիք կործանողներն են միայն որ յարգի են։ Վերջերս ելեմտական նախարարը փոխեցաւ։ Բայց գիտէ՞ք թէ ինչ տեսակ մարդ է նախկին կրթական և նորընտիր ելեմտական նախարար Զիւհտի փաշան։ Սուլթանը թերևս պ. Լուպէի

օսմանեան կառավարական վարկի մասին Միւնիք պէյին յայտնած հաւատքը զօրացնել ուզած ըլլայ նախարարութեան կոչելով Զիւհտի փաշան, որ ասկէ ոչ շատ առաջ, թղթագրամներու շրջաբերութեան ատեն, անհասնում հարստութիւն է դիզած անհաշիւ թղթագրամներ հրապարակ հանելով և իր գրպանը լեցնելով։ Հաստատապէս կրնանք ըսել, որ այժմէն, երբ Զիւհտի փաշան ելեմտական կառավարութիւնը իր ձեռքն առնէ, հանրային պարտքի օտար վարչութիւնը պիտի յաւիտեանականանայ Թիւրքիոյ մէջ։

Պետական դանձին վրայ խօսելու առիթով տեղն է յիշատակել որ զինուորական ծառայութեան շրջանին լրացուցած ծովային կարգ մը զինուորներ իրենց տեղերը դառնալու համար՝ իզուր երկար ատեն իրենց դիզած ամսականներու կարգադրութեան սպասելէ ետքը, մօտ օրերս ալ համբերութիւնին հատած, գիշերով կը յարձակին թէրասնէի ծովակալութեան պաշտօնատան վրայ և կը պահանջեն ծովակալ փաշան տեսնել։ Իհարկէ դիմագրութիւն կը ըլլայ, հեռաւար կուռ զինուորները զինուած էին։ Աղմուկը կը մեծնայ. Բերայի, Բանկալթիի զօրանոցներէն մեծ քանակութեամբ զօրք կը թափի նաւարանը և մեծ դժուարութեամբ կը յաջողին մարել կուռը։ Այս սովալուկ և կատղած զինուորներու դիզած ամսականներուն իբր վճար՝ անոնց կը տրւին հէ վալ էն եր իրենց հայրենակից դիւղերուն վրայ (Իհարկէ, հայ դիւղերու)։ Ալ կարելի է դիւրութեամբ երևակայել թէ ինչ կը ըլլայ այն դիւղերու վիճակը, ուր այս կատղած ու անօթի գազանները պիտի երթան իրենց առնելիքները պահանջել...

*

Հայերը իբր թէ սկսած են ազատ ձավորդել ուզած տեղերին, սակայն փաստերը ուրիշ տեսակ կը խօսին։ Վերջերս Տիրան Պասմաձեան անուն ե ազ մ ա յ ի երկրորդական վաճառական մը, պահանջի մը գանձման համար, Եզմիր կուղեորւի գործը լմնցուցած դաւնալու համար հազիւ թէ շողեցաւ մանկու կը ըլլայ, երբ ոստիկանները զինքը կը կեցնեն և բանտ կուղեն տանիւր Հոն կամբաստանեն ալ չգիտցուի ինչ բանով միայն թէ անմիջապէս ազատ թողելու համար զինքը՝ 20 ոսկի կը պահանջեն։ Շատ դժուարութեամբ միայն 3 ոսկիով թող կուտան որ տեղը դառնայ։

Պոլսի եկող գաւառացի վաճառականներ կան՝ գնումներ ընելու համար. դեռ գործերին չլմնցուցած, նայիս, ոստիկաններ կուգան իրենց սենեակը և կ'ազդարարեն որ իրենց պայմանաժամը լրացած ըլլալով յաջորդ օրն իսկ մեկնելու են։ Բայց վաճառականը ճարահատ, չուղելով գործը կիսկատար ձգել, 10-20, 25-30 մինչև 50 ոսկի կուտայ, գործին համեմատ, ու կը մնայ։ Այս կարգի սակարկութիւնները այլևս բացէ իրաց տեղի կ'ունենան։

Ան գաւառացիներ, որոնք՝ հոս կարգին գործ ունենալով, ժամանակի մը համար հայրենիք գացած են իրենց սիրելիներու քով։ Երբ կուգեն վերադառնալ իրենց գործին, հրաման չկայ։ Տեղին միւտիրը հրաման կուտայ, միւթէսարի՞ք կ'արգիլէ, միւթէսարի՞ք թոյլ կ'ուտայ, վալին կ'ընդդիմանայ, վալին արտօնութիւն կ'առնուի, և ահա ծովեզերքներէն ետ կը դարձնեն։ Այս գործողութիւնները փոխարէնով կը ըլլան, և խեղճ գաւառացիներուն պարտքով ծանր տոկոսներով փոխ առած դրամները կերթան լեցնելու պաշտօնեաներու ծակ գրպանները։

Ցաւարի, յոյժ ցաւարի է, ըսելը որ այս կարգի գործերու մէջ, ինչպէս նաև բանտարկեալներու վերաբերեալ խնդիրներու մէջ, թիւրք պաշտօնեաներու անխղճութեան ու կաշառակերութեան միշտ միջնորդ, մեղսակից ու շահակից կը հանդիսանայ նաև Հայ պատրիարքարանի գործակատարը՝ տխրահռչակ Տէր Ներսէսեան Տիգրան էֆ., որուն լիբբ շահատակութիւնները ալ չափ ու սահման չեն ճանչնար: Անոր, անտէր Հայ կին, եթէ բանտարկեալ վաւակ կամ ամուսին կամ եղբայր ունիս, գնա պատրիարքարան, հոն գործդ կը տեսնեն կամ, լաւ ևս է ըսել, Տիգրան էֆէնտիին կը յանձնեն, որ քո ունեցած-չունեցածդ ալ խեղճ կին, ձեռքէդ խլելով, խաբկատիր յոյսերով ու շատ անգամ ալ կոշտ ու կոպիտ խօսքերով խաղցնէ քեզ երկար տարիներ, առանց մազի չափ ծառայութիւն մատուցանելու: Ճամբորդ ես. գնա Տէր Ներսէսեան էֆէնտիին, խնդրէ անկէ: Եւ դուն, գաւառացի վաճառական, ի՞նչ կուզես. քեզի տարածամ քշել կուզես. կուզես մէկ-երկու շաբաթեան արտօնութիւն ձեռք բերել. . . շուտ ըրէ՛, գնա Տիգրան էֆէնտիին խնդրէ. միայն ուշադրութիւն ըրէք, որ սակարկութեան մէջ շատ շնեղացնէք զինք, որովհետև, այդ, պէտք է ժամերով սակարկել: Հոգ չէ եթէ ան 50 կուզէ, դուն 10 տուր և մինչև 20 ելիր: Չունիս, պէտք է ձարես՝ հագուստ-կապուստ ամէն բան ծախէ ու ձարէ այդ գրամը, որովհետև «ագնիւ», «մեծանձն» Տիգրան էֆ. Տէր Ներսէսեանը իրեն համար չէ որ պիտի առնէ այդ գրամը, այլ ատով պիտի կաշառէ կառավարական պաշտօնեաները, որ խնդիրքդ տեսնեն. . . Ինչ մէկ կուտ ալ չ'առնեն. . .

Այս տեսակ պաշտօնեաներ կան պատրիարքարանը: Բայց ո՞վ կը համարձակի բողոքել գանգատիւր և որո՞ւ պատրիարքին ազգականն է արդէն Տէր Ներսէսեանը, որ եթէ Օրմանեանի երկնապարգև պատրիարքութիւնը վրայ չհասնէր, սնանկացած, ոչնչացած, մուրալու աստիճանին էր հասած, բայց հիմակ հարուստ է. . . շատ հարուստ ֆաղաքական ժողովի՞ն բողոքել: Օճօ՞, պաթախանէ է պատրիարքարանը, յաճախ աւելի երկիւղալիքան շարք մը ուրիշ հիմնարկութիւններ:

Բայց կերեի վերջերս Արծնական ժողովը ալ չուզեր վախենալ սպառնալիքներէ ու մանաւանդ սին խոստումներէ. ձգձգումներէ ալ կշտացած է: Իզուր պատրիարքը ստիպելէ ետքը, որ անձամբ երթայ սուլթանին ամէն ինչ կօսի, պարզէ թագրիները, որոնք հազարաւորներով կը համրուին, ու պատասխան ուզէ, առաջարկեր են: Խառն ժողովին, որ երկու կրօնական և երկու ալ աշխարհական անդամներ ուղղակի դիմեն սուլթանին և խնդիրը պարզելով յայտնեն որ ալ անկարելի է, իրաց այս վիճակի մէջ, իրենց պաշտօնին շարունակել, հետևաբար և հրաման կը խնդրեն նոր ընտրութեան: Սակայն այդ որոշումը շատոնց արգէն ծըրքըը հասած է, զի պատրիարքարանին մէջ կը վիտան լրտես պաշտօնեաներ և ժողովի անդամներ, որոնք անասելի կապեր ունին պետութեան հետ: Արքիպիսկոպոս այդ իմաստով թագրի մը կը գրեն կը ղզկեն, այնքան անթիւ անհամար թագրիներու լեւնակոյտին վրայ հաստ մըն ալ աւելցնելու և սուլթանին սաղարէյն ծիծաղը շարժելու համար:

Ն Ա Մ Ա Կ Բ Է Յ Ր Ո Ւ Թ Է Ն

23 փետր. 1901

Ինչպէս ամէն տեղ, կառավարութիւնը հոս ալ կը կողոպտէ քրիստոնեաները, միջոցներու տարբերութիւնով միայն:

Քանի մը օր առաջ կուսակալի հրամանով քրիստոնեաներուն (80% բնակիչներուն) բուն 3,000 տոմսեր գրուեցան, ի նպաստ աղքատաց հիւանդանոցին: Ամէն անոնք, որոնք իրենց երեսաներուն մէկ շաբաթեայ օրապահիկը, 10 Փրանք, պաշտօնեաներուն չի յանձնեցին, օձիքնին չի կրցին աղատել:

Հանգանակած գրամին ինչ ըլլալուն ալ պէտք չէ հարցնել. քանի որ աւազակապետը ինքն կուսակալն է:

Օրբօրին քրիստոնեաներուն համար անտանելի դժոխային դրութիւն կըստեղծուի. ամենափինթի մահմէդականին հետ չէ կարելի խօսիլ մէյմէկ տ էր է պ է յ ի են ամէնքը. իսկ մենք, հայերս, ամէնէն աչքէ ինկած պիղծ արարածներ ենք. . .

Դժբախտաբար Բէյրութի հայութիւնն ևս արդէն բազեր է անբարոյացման դրօշը, սկսած իր վանքէն, ուր կիշխէ Երուսաղէմի հաստափոր Մատթէոս Քայքճեանը: Հասարակութիւնը կարծես մոռցած է որ նոյնիսկ հայ է. ոչ դպրոց ունին, ոչ ազգային համերաշխ կապեր: Դաւաճան Մատթէոս վարդապետը ուղածը կ'ընէ, և ձայն չեն հաներ, որովհետև եթէ Քայքճեան կատղի, ալ ու ձախ կը մատնէ, մեծը ու փոքրը, գիտցած-չգիտցածը: Արդէն երեք տարի առաջ այդ վարդապետը բաւական հայ երիտասարդներ աքսորել տուաւ: Այս տարւայ սկիզբն ալ Պօլսոյ թերթերէն մէկուն մէջ Բէյրութէն իր մասին գանգատ կար: Երբ այդ կարգաց, գազան արարածը չամչնալով ըսաւ. «Եթէ ժողովուրդը Պօլսոյ թերթերով դիս կը պարսակէ, ես ալ իմ ձեռքէս եկածը պիտի ընեմ այդ ա պ եր ս ի տ ն եր ու ն». . . Խեղճ տղայ մը Արաբկիրի Ծագ գիւղէն, Պօղոս Չոպանեան անունով, Հալէպէն ոտքով Երուսաղէմ ուխտի գնացած ատեն, կը բռնեն և վեց օր հեծեալ զինուորին հետ քալեցնելով՝ կը բերեն հոս, կիսամեռ վիճակի մէջ, յետոյ կ'աքսորեն: Թրքացած վանահայրը, որ հայերու դէմ վրէժխնդրութեան կատարածութեանն բռնած է, ոչ մէկ շարժում չըբաւ խեղճ տղան միսթարելու:

Ամէն տեղ անբարոյականութիւնը սկսած է գլուխ վերցնել: Այս տեսակ պարագաներուն՝ անշուշտ ժողովրդին գիտակից նախաձեռնութիւնը անհրաժեշտ է:

Մ Ա Յ Ի Ս Ի 1-Ը Թ Ի Յ Լ Ի Ս Ո Ւ Մ

(ՆԱՄԱԿ ԿՈՂԱՄՈՑ)

3 մայիս

Այն ինչ որ կատարեց անպիլի 22-ին, կիրակի օրը, Թիֆլիսում, պատմական նշանաւոր դէպք պիտի համարուի Կովկասի կեանքում:

Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատական մի քանի կոմի-

*) Կովկասից գրած այս նամակը, որ կրում է ՆՈՒՐԱՐ ստորագրութիւնը և որ մենք տպագրում ենք քաղաքագործէն մեզ յանձնել է ժընէվում մամուլոր կերպով: ԽՄՐ.

տէներ վճուել էին այս տարի մայիսի 1-ը տօնել քաղաքական ցոյցերով երկրի զանազան կենտրոններում: Թիֆլիսը—Վոլկասի մայրաքաղաքը—Նոյնպէս ուղեց միացնել իր ձայնը ընդհանուր եղբայրական բողոքին, և ահա նախապատրաստեց ապրիլի 22-ը: Պէտք է ասել, որ արդէն 3-4 տարի է, ինչ որ Թիֆլիսի բանւորների մէջ նկատուում են յեղափոխական շարժման նշաններ: Ռուսաստանից եկած ուսնախնայները և կովկասեան երիտասարդութիւնից մի շարք ընտիր անձնաւորութիւններ՝ իղան այդ գործունէութեան նախակարասները մեզ մօտ: Սոցիալիստական բովանդակութեամբ մեծ թւով բրոշուրներ, ուսերէն, վրացերէն և հայերէն լեզուներով բանւորական ժողովներ, դասախօսութիւններ, բանւոր պրօպագանդ — ահա այն միջոցները, որոնք մեծապէս նպաստեցին մեր բանւորների ինքնագիտակցութեանը: Մայիսի 1-ը արդէն տօնուում էր մեզ մօտ 3 տարուց ի վեր, բայց քաղաքից դուրս, հեռու ոստիկանութեան աչքերից: Անցեալ տարի, օրինակ, չնայելով անձրևային վառ եղանակին, զանազան ազգութիւնների պատկանող աւելի քան 400 բանւորներ տօնեցին մայիսի 1-ը քաղաքից 8 վերստ հեռավորութեան վրայ բացօթեայ, մի ձորի մէջ: Կառավարութիւնը անտեղեակ չէր սկսած շարժման և ի հարկէ ամէն կերպ հետամուտ էր լինում բանւորական կազմակերպութիւններին երբ անցեալ տարի օգոստոս ամսին պայթեց երկաթուղու արհեստանոցներում հազարաւոր բանւորների նշանաւոր գործադուլը: Այդ օրանից արդէն այլևս ոչ մի միջոց չէր խնայուում բանւորական շարժումը կասեցնելու համար: Ամենօրեայ խուզարկութիւններ, խմբովին բանտարկութիւններ, քարոզ — սովորական երևոյթներ էին դառել բանւորական կեանքում:

Բայց ահա մօտենում է այս տարւայ մայիսի 1-ը (ապրիլի 18-ը): Ռուսաստանի զանազան կեդրոններում տեղի ունեցած դէպքերը երկիւղ են ներշնչում, որ մեզ մօտ էլ մայիսի 1-ը կարող է յիսաղաղ՝ չանցնել և կառավարութիւնը արդէն ապրիլի 10-ից սկսած երկաթուղու արհեստանոցների շուրջը, քաղաքում գտնուող գործարանների և այլևայլ արհեստանոցների մօտ, ինչպէս նաև բոլոր բանւորական թաղերում, ահագին քանակութեամբ դրագունի և կոզակների գնդեր է կանգնեցնում՝ գիշեր ցերեկ անընդհատ պատելու և բանւորներին ահ ու սարսափ ներշնչելու նպատակով: Սակայն բանւորների մէջ մայիսի 1-ը տօնելու տենչանքը աւելի զօրեղ էր քան սպառնացող վտանգի երկիւղը, — և եղաւ այն՝ ինչ վճուած էր: Որոշել էր, որ կիրակի օրը, ապրիլի 22-ին, մայիսեան տօնին մասնակցել ցանկացող բանւորները պիտի ժողովէին Սոլջատսկի Բաղարի մօտ, Ալէքսանդրեան այգու ներքևից անցնող փողոցում: Այդտեղից բանւորները պիտի ուղղւէին Սոլջատսկի բաղարի միջով դէպի Պուչինեան փողոց, երևանեան հրազարի միջով դէպի Պուչինեան փողոց, երևանեան հրազարի միջով դէպի Պուչինեան փողոց և կառավարչապետի պալատի առջևից՝ Գոյովինսկի պրօսպեկտ: Նշանակած առաւօտեան ժամը 11-ին բանւորների թիւը անցաւ 1,000-ից: Անմիջապէս տրեց պայմանական նշանը և բանւորական կարմիր դրօշակը ծածանեց բազմութեան առաջ: Օդը թնդաց կեցցէներով, «կեցցէ՛ հանրապետութիւն», «կեցցէ՛ ազատութիւն», «կեցցէ՛ ութամեայ աշխատանք» և ընդ

Գրօշակի վրայ գրւած էին, ուսերէն, վրացերէն և հայերէն լեզուներով Մարքս-Էնգելսեան մանիֆեստի

կոչը «Բոլոր երկրների պրօլետարներ, միացէ՛ք» և «բանւորական ութամեայ աշխատանք» խօսքերը: Գրօշակի վրայ կային նոյնպէս Մարքսի, Լասսալի և Էնգելսի պատկերները: Խումբը բուռն ոգևորութեամբ առաջ շարժեց: Կառավարութիւնը, որ վաղորդ հոտ էր առել պատրաստուող ցոյցի մասին, հէնց դրան էր սպասում: Իր լրբութիւններով հուշակած ժանդարմների կապիտան Լալբով, որ բազմաթիւ լրտեսներով, ոստիկաններով ու զինւորներով պատում էր կիրակի օրւայ բազարի առթիւ խմբած ամբոխի մէջ դիմեց իր «պարտականութիւնների կատարմանը»: Հրամայեց ցրել բանւորներին, և զինւորներն ու ոստիկանները ամենակատաղի յարձակում գործեցին նրանց վրայ: Տեղի ունեցաւ սոսկալի ընդհանրում, Թիֆլիսում չտեսնուած մի տեսարան... Ոստիկաններն ու զինւորները հարւածում էին մերկացած սրերով, իսկ բանւորները իրենց պաշտպանելու համար ունէին միայն իրենց ջլոտ բազուկները և այն, ինչ ձեռքի տակ կ'ընկներ փողոցում: Ամբողջ քաղաքը իրարու անցաւ: Հուսով վրայ հասան ոստիկանապետը, գունդ-գունդ կօզակներ և զօրքեր ու վերջապէս նահանգապետը: Ձիաքարշները տեղ-տեղ դադարեցին շրջել: Հատ սրտաշարժ էր տեսնել թէ ինչպէս ձիաքարշի մի քանի վագոններից կառապանները և կօդուկաորները փախչում էին կուրի ասպարէզը՝ անգէն ժողովուրդին օգնութեան հասնելու...

Կուրը, յուսահատ կուրը, աւեց ամբողջ 1/2 ժամ: Հատ արին թափւեց, շատ վերաւորւածներ ընկան... Բանւորներից մէկը թէև ծանր վերաւորւած և զինւորի ոտքի տակ ընկած՝ բայց և այնպէս բարձրաձայն գոչում էր, «կեցցէ՛ սօցիալիզմ, կեցցէ՛ ութամեայ աշխատանք»: Գրօշակի յաղթանակում, անվեհեր բանւոր Առաքելը, երբ մերկացած սուրը վրայ են բերում նրա ձեռքին խփելու և դրօշակը խլելու համար, առնում է սուրը և ձեռքով ծալում կոտորում է: Մի օրիորդ (մի քանի ուսանողուհիներ էլ կային մասնակցողներ) տեսնելով պրիստաւներից մէկի անգթութիւնները՝ ինքնամոռաց գայրոյթով յարձակում է նրա վրայ ու մազերը փետում, մոնդիրը պատռոտում: Բանւոր Մախարա ձէ՛ սրի ծանր վերքեր ստանալով՝ 3 անգամ ատրձանակ է արձակում՝ ոստիկանների վրայ, որոնցից 2-ը վերաւորում են: Պրիստաւ Գեդեմիանովը նոյնպէս ծանր վերաւորւած է: Ոստիկանապետը այնպիսի մի հարւած է ստանում ոտին, որ սրունգը ջարդուում և ձիուց վայր է ընկնում:

Մի ժամից յետոյ կառավարութեան բարբարոս ուժի շնորհիւ «կարգը վերականգնեց», բայց և այնպէս դէպքից յետոյ ամբողջ 3 օր Թիֆլիսի փողոցներն ու բանւորական յայտնի թաղերը բռնած էին զօրքերով, իսկ կիրակի օրերը մինչև այժմ էլ ամբողջ ոստիկանութիւնը ոտի է կանգնեցնում: Բանտարկւած են բազմաթիւ բանւորներ: Պաշտօնական լրագիր «Վոլկազը» ցոյց է տալիս 41 հոգի բանտարկւածներ, որոնց թւում 9 հոգի վերաւորւածներ, բայց այդ թիւը շատ նւազ է իրականից: Ձերբակալւած են ցոյցի տեղում Պետերբուրգից նոր եկած 3 ուսանողուհիներ: Մի ուսանող, ազգով գերմանացի, պատահամբ ահանատես լինելով անցքին, պաշտպանում է բանւորներին և ծանր վերքեր է ստանում ոստիկանութիւնից: Լուր կայ, որ ուսանողը արդէն մեռել է բանտում: Մահամերձ հիւանդ

է նոյնպէս բանւոր Մախարաձէն: Շատ վերաւորեալներ
 և ջարդաւորներ կան բանւորներից իրենց աներում և
 բանտերում: Բանտարկեալների թիւը հարիւրից անց է:
 Մեռեալի և նահանգական բանտերը այնչափ լցած են,
 որ սկսել են նոր ձերբակալողներին զինւորական բանտը
 տանել:

Այժմ, երբ դրում եմ այս տողերը, համեմատաբար
 խաղաղութիւն է տիրում՝ քաղաքում, սակայն ուշ գի-
 շերներին խուզարկութիւնները շարունակուում են: Աւրա-
 խային այն է, որ՝ շնայելով կառավարութեան բոլոր
 խստութիւններին, շարժումը բանւորների մէջ ոչ միայն
 չի նւազում, այլև աճում ու արդէն շատ որոշ գոյն
 է ստանում:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Ե Ր Ո Ր Ա Ղ Ր Ի Ի Ր

(Շարունակութիւն. — Տես № 3)

Հինգ տարի պանդուխտ մնալէ ետքը՝ Սերոբ, որոշ
 ծրագրով և աւելի հասունացած ու կազմակերպւած գաղա-
 փարներով վերադարձաւ իր հայրենի երկիրը, որուն հողն
 ու ջուրը կը քաշէին զինքը: Իր գործունէութեան կեդ-
 րոն և վայր ընտրեց մասնաւորապէս Ախլաթի գաւառը
 և ընդհանրապէս Բաղէշի նահանգը: Կառավարութիւնը
 շատոնց մոռցեր էր սպաննւած քրդերու խնդիրը, սակայն
 քրդերը երեկւան պէս դեռ մտքերնին էին պահել այդ
 սպանութիւնները և չէին մոռցեր: Ժողովուրդը իրաւամբ
 կ'ըսէ. «Հազար տարին կանցնի, քիւրդի տարին բըս ա ք,
 բըս ա ք (սպասէ, սպասէ) չանցնիր»: Սակայն և այն-
 պէս Սերոբ մինչև երկու տարի կրցաւ երկիրն մէջ ազատ
 շրջիլ առանց մեծ կասկած հրահրելու:

Հայկական խնդրի շուրջը բարձրացած յուսատու
 աղմուկները, կոտորածները, յեղափոխականներու գեղ-
 մարդկային ձիգերը բաւականին թօթւած էին ժողովուրդին
 թմրութիւնը: Սերոբ, հայ ժողովուրդին նոր զարթոյց կեն-
 դանի խնովքէն օգտւելով, հուժկու ինքնամատահու-
 թիւնով բրոքականդի ձեռնարկեց. Մուշ, Սասուն, Բաղէշ
 Պուլաւերի և ինչ աշխարհք մաս կուգար, երիտասարդու-
 թիւնը իր հայրենասիրական կոչումին ճամբուն մէջ
 դնելու, անոնց սեր ու հոգի ներշնչելու համար: Երկար
 առեն, չէրքէզի զգեստով կամ ուրիշ տարազով ծպտած,
 իր ափ մը ընկերներով ժուռ կուգար, ամէն տեղ կա-
 պեր հաստատելով ու կօծիտէներ կազմելով:

Սերոբ առիւծի սիրտ ունէր, ինչպէս նաև քաղցր
 լեզու, այնպէս որ իր անուշ և վեհանձն բնաւորութեան
 շնորհիւ այնքան սիրելի ու պաշտելի եղաւ ժողովուրդին,
 որ անոր մէկ խօսքը երկուք չէր ընել: Բացարձակ հե-
 ղինակութիւն շահած էր Ախլաթի, Բաղէշի, Բուլաւերի
 մէջ: Այս վերջին գաւառին նախկին գործիչներու կողմէ
 հեգնութիւն «կենդանի ննջեցեալ» անունը կը տուէր,
 որովհետև հոն երբէք ոչ ոք յաջողութիւն չէր ունեցած:
 «Հովիւը հովէին լեզւէն լաւ կը հասկնայ» — կ'ըսէ ժողո-
 վերդական առածը. այսպէս եղաւ նաև Սերոբի համար,
 որ իր դիւթող լեզուով և իր փայլուն մ աւ զ է ր —
 զօր «մալիւ-զար» կ'արտասանէին — Տրացանով գերեց գա-
 ւառին բոլոր երիտասարդ սրտերը: Միևնորից տեղի կունե-
 նար Բաղէշի մէջ: Մինչև 95 թ. Բաղէշ Հայաստանի

հրէաներու ժողովածու մը նկատուած էր: Բայց 96-ի
 կոտորածներէն ետքը, Սերոբի և հերոս Գուրգէնի ան-
 միջական ազդեցութեան տակ, պատկառելի ուժ մը ծնաւ,
 որ կառավարութեան ոչ-նւազ մտահոգութիւն պատճա-
 ռեց: Բաղէշի կառավարիչը, եկաւ ժամանակ մը, որ օր
 ու գիշեր Սերոբին Բաղէշ մտնել-ելլելու յոտեսական
 լուրերով զբաղած էր, որուն հետեւանքն եղան երկար
 և ապարդիւն խուզարկութիւններ: Զանձրացած՝ վախն
 այլևս ամէն մատնիչի չէր հաւատար: Սակայն Սերոբի
 անունը երթալով սարսափ կազդէր քաղքեցիներուն,
 որու վրայ որոշեցաւ որ քաղքին ցերեկւան պաշտ-
 պանութիւնը յանձնւի թիւրքերուն, գիշերը հայերուն:
 Քանի մը օր վերջը, երբ փոխ Ֆէհմի էֆէնտին սպան-
 նեցին, ոչ միայն թիւրքերը, այլ նոյնիսկ կառավարու-
 թիւնը չէր համարձակէր գիշերները դուրս գալ, խու-
 զարկութիւններ կատարել կամ ճամբաները պահել:
 Հակազդեցութիւնը զօրեղ էր. շատ յայտնի մատնիչներ
 ջերմ ազգասէրներ դարձան և Սերոբին ուսէ պաշտպա-
 նութիւն չէին խնայեր:

Ախլաթի մէջ Սերոբի գործունէութիւնը աւելի հզօր
 կերպով շեշտուեցաւ: Հոն ամէն տեղ դռները բաց էին
 իր առջև: Բայց քիւրդերը և քանի մը դաւաճան հայեր
 կ'աշխատէին մանրամասն տեղեկութիւններ հաւաքել և
 օրըօրին հաղորդել կառավարութեան:

Այդ ամառը «ջան-Ֆէդայիներու» շարունակ արշա-
 ւանքներէն՝ քրդերուն սիրտը դողը պատած էր. «Սա-
 սուն կոտորող իրենց եղբայրներուն վրէժը լուծելու
 համար, Ռուսիայէն եկած ջան-Ֆէդայիներ կը վնասան
 այս կողմերը, որոնց մէջ է այն քաղ մարդը, որ ժա-
 մանակ մը յայտնի էր ամէնքին Սոխորդայ Սերոբ անու-
 նով»: Կերթային քրդերը այսպէս կը պատմէին կառա-
 վարութեան: Կառավարութիւնը սկսաւ իր խուզարկու-
 թիւնները, իսկ քրդերը, ահ ու սարսափի մատնւած,
 մէկ երկու հոգով երբէք չէին համարձակեր հայ գիւ-
 ղերը ոտք կոխել. ինչպէս առաջները, երբ ամէն անբա-
 յոյականութիւն և գողութիւն թոյլ կուտային իրենց:

Սերոբ սրտի անհուն գոհունակութիւն մը կը զգար՝
 տեսնելով իր անձնէր և հայրենասէր գործունէութեան
 բարի արգասիքը: Բայց որպէս զի իր սիրած ժողովուրդին
 ապահովութիւնը չի վտանգւի և կարող ըլլայ ամէն
 ընդհանրապէս պատրաստ գտնուիլ օգնութեան վազելու համար,
 ձգեց երգիքը և փոխադրուեցաւ լեռնէլեռ, ուր էին իր
 հոգմատոյլ ծառէ պալատները, երկնքի կախ ջահերը
 և ազատութեան ճամբան:

97-ի ամառը Հասնանցի քիւրդ ձիււորներ թեղուտ
 գեղի տաւարը կը քշեն: Աղբիւր, լւածին, չորս ընկեր-
 ներով կը վազէ, կը յարձակի քիւրդերուն վրայ, որ
 տաւարները ետ առնէ: Կատաղի կուռ մը տեղի կ'ունե-
 նայ: Քրդերէն երեքը՝ տաւարը առջևնին ձգած՝ արագ
 կը քշեն, մինչդեռ մնացածը կը շարունակէ կուր, որ
 կը տեւ վեց ժամ և կը վերջանայ գիշերուան ժամը
 մէկին: Քիւրդերը իրենց շատուրութեան շնորհիւ կը
 յաջողին փախցնել արջուները, բայց կուր դաշտին
 մէջ կը ձգեն քանի մը դիակներ և վիրաւորներ, առանց
 հայրուն վնաս մը դպելու:

Աղբիւր իր դաշնակցական պզտիկ ուժով պահապան
 հրեշտակն էր դարձեր այդ կողմի հայ գիւղերուն և
 Ազրայելը իր թշնամիներուն:

Օրին մէկը Սոխորդ գիւղին վերև, քսան ընդհանրապէս հեռու,

Ս. Աստուածածին անունով Հին մատուռի մը մօտ նստած էր Սերոբ իր երկու ընկերներուն հետ, որոնց մէկը Հ. . . առիւծի պէս տղամարդ մը, տաքտաք կը վիճէր հրացանով նշանաւութեան մասին, որուն մէջ Սերոբ անզուգական էր: Յանկարծ վարի ձորէն ձայն, արմուկ կը լսուի Հասնանցի երեք քիւրդ ձիաւորներ էին, որոնք, գիւղացիներուն դաշտերը աշխատանքի ելած աստեղծին Ծղակ գիւղի նախիրը օրցերեկով եկեր յափշտակեր կը տանէին: Ո՞վ կը համարձակէր նէմրուտ լեռներուն մէջ հասնանցիներուն հետեւիլ. — եօթը գլխէն դէ ըլլալու էր:

Աղբիւր աս տեսածին պէս սիրտ կուտայ ընկերներուն և դառնալով Հ. . . -ին, «խօսքի ժամանակ չէ հիմա, ահա ասիկ թալանը մեր վրայէն պիտի անցնի, ձեզ տեսնեմ, շտապեցէք խլել անոնցմէ»: Երկու ընկերները ծառթուփիրու մէջէն կը քալեն աւազակներուն վրայ: Աղբիւրը, ինք անխուով նստած, արծիւի աչքերով կը հետեւէր իր ընկերներու ընկերին: Քիւրդերը կը մտնեն, հայերը հետուէն կը կանչեն որ թալանը ձգեն. քիւրդերը մտիկ չեն ընել, ընդհակառակը կատաղաբար կրակ կընեն, որոնց կը պատախանեն հայ երիտասարդները: Աղբիւր տեսնելով որ իր ընկերներուն դիրքը խախտու է և չպիտի կրնան քրդերը վանել — արդէն Հ. -ն ալ կը կանչէր. «Աղբիւր ջան, հասիր, Աղբիւր ջան», — կը ցատկէ անմիջապէս և առաջին գնդակին մէկուն աջ ձեռքի երկու մատները թոցնելով, ասպետաբար հետուէն ձայն կուտայ կոծներուն. «Ես Սերոբն եմ, այժմ երկու մատներնիդ կտրեցի, որովհետեւ համարձակեցաք գնդակ արձակել ընկերներու վրայ եթէ շարունակէք, երեքդ ալ աս րոպէին նեմրուտի թռչուններուն կեր կ'ընեմ»: Քիւրդերը տեսնելով իրենց վերաւոր ընկերը՝ օտարափափաք կը ձգեն նախիրը և կծիկը կը դնեն:

Աղբիւրի տաքտիքն էր, ամէն անգամ, երբ դէպք մը պատահէր, համարձակօրէն իր թշնամիներուն երեսին կ'ըսէր. «Ես Սերոբն եմ, որ այս գործը կ'ընեմ. չըլլայ որ անմեզ ժողովորդին դպչելք»:

Յարատեւ, անխոնջ և ջերմեռանդ աշխատութիւնով Սերոբ յաջողած էր բաւական թւով վրեժառու հերոսներ պատրաստել, որոնք՝ հմայած իրենց վարպետին, այդ հերոսական սրտի տէր զինուորին անձնէր և հիանալի գործունէութենէն, ամէն զոհարբութեան և սխրագործութեան պատրաստ էին:

Սերոբ, աղբիւրը ազատութեան ծարաւի ժողովորդին, իր չքնաղ կնոջ Սօսիին սրտին մէջ գտած էր ներշնչուող մաքուր խորան մը և դիւցազնուհիի մը սարսուռը:

«Բաղէջ վիլայէթ Անուշ Սալնայ ձոր,
Սօսին կը կանչէ, հոգի ջան, կեանքը ազգին տուր»:
(Շարունակելի)

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Տ Ա Ս Ն Ի Ն Ե Ր Ո Ր Գ Դ Ա Ր

(Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն - Ս Օ Ց Ի Մ Ա Լ Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն)

VII

Որքան աւելի ենք առաջանում 19-րդ դարի պատմութեան մէջ, այնքան աւելի է շեշտուում «ազգայնական» գաղափարը, անկախ, ինքնավար ազգայնութեան սկզբունքը: Թամանակակից քաղաքակրթութեան տիրապետող գծերից մէկն է դա թերևս խոշորագոյնը: Կարելի

է ասել ընդհանուր առմամբ, որ այդ սկզբունքը 19-րդ դարու ծնունդ է. «ազգայնութիւն»՝ անարօպօրոգիական ու քաղաքական նշանակութեամբ չկար առաջներում կամ բացառիկ երևոյթ էր: Յունաստան, Բուլղարիա, Սերբիա, Ռումանիա, Ռուգարիա, Իտալիա, Գերմանիա և ըն, իբրև ուրոյն ու քաղաքականապէս կազմակերպւած ազգային մարմիններ, գոյութիւն չունէին: 19-րդ դարը դուրս կանչեց նրանց անյայտութեան կամ մոռացութեան անդնդից և դրեց խաղաղ ու բնականօն գարգացման ճանապարհի վրայ:

Սակայն անցեալ դարում «միջազգայնութեան» գաղափարը ևս: ինչպէս արդէն տեսանք, ծնունդ առաւ գործնական կեանքում և աճեց մասսաների գիտակցութեան մէջ: Թուում է, թէ հակասութիւն կայ այդտեղ, բայց այդ հակասութիւնը անվերածելի չէ. «ազգայնութեան» և «միջազգայնութեան» գաղափարները, մինը իբրև հետևանք քաղաքական-ազատագրական շարժումների, միւսը իբրև ծնունդ սօցիալական եւօլոյցիայի, և երկուսը՝ իբրև անխուսափելի արգասիք տնտեսական-կուլտուրական զարգացման առաջ ընթացան գուգակցաբար, մերթ իրարու խանգարելով, մերթ ձեռք ձեռքի տւած, ներդաշնակ, իբրև լրացուցիչ գաղափարներ, երկուսն էլ հաւասարապէս անհրաժեշտ համամարդկային քաղաքակրթութեան համար:

Ազգային միութեան ու անկախութեան հարցը ամէն տեղ հերթական էր. Նապօլէօն III ինքն էր հանդիսանում նրա պաշտպան-խրախուսող: Նապօլէօն III-ի շնորհիւ Իտալիան իրագործեց իր միութիւնը. հերթը Գերմանիային էր: Պրուսիան գերմանական աշխարհում այն կորիզն էր, որ պիտի կատարէր Պիէմօնտի դերը: Եւ Պրուսիան ասպարէզ հանեց նոյն պատմական երրորդութիւնը՝ յանձին Ալիէքէի, Բիսմարկի ու Վոյտկէի — երեք անձնաւորութիւններ, որոնք կոչւած էին տնօրինելու գերմանական մեծ ազգի ճակատագիրը: Իւրաքանչիւրը նրանցից իր տեղն ունէր: անշուշտ, բայց Բիսմարկ իր հազւագիւտ, գիւլային հանձարով գերազանցում էր բոլոր միւսներին: Նա այդ երրորդութեան կենտրոնական դէմքն էր, որ կարողացաւ յետագայում իր վրայ բեւեռել ամբողջ Եւրօպայի լարւած ուշադրութիւնը:

Գերմանիայի միութեան գործը մի քանի անհատների գործ չէր սակայն: Համաշխարհային պատմութեան բնմի վրայ անհատները հանդէս են գալիս ոչ իբրև ամենակարող գործօններ, որոնք ստեղծագործում են ex nihilo, այլ միայն իբրև սպասաւորներ իրենցից անկախ որոշ ֆակտորների, իբրև արձագանքներ տնտեսական և իդէօլոգիական պատճառներից բղխող որոշ տրամադրութիւնների: Ազդուց հնչւում էր քարոզը գերմանական միութեան: Ազդուց փիլիսոփաներ, բանաստեղծներ ու հրապարակագիրներ իրենց բեղմնաւոր, հրակայական երկերով գիտակցաբար կամ անգիտակցաբար կերտում էին ապագայ հոյակապ շէնքի խարիսխը: Գեթե է ու Շիլլէր գրականութեան մէջ, Կանտ, Ֆիխտե ու Հէգել փիլիսոփայութեան աշխարհում, տիեզերական հոգակ վաստակելով, վաղուց տարածում էին երկրագնդի վրայ գերմանական անունը, նրա խորունկ հանձարի արգասիքը: Պրուսիայի ու Բաւարիայի կամ Բադէնի ու Ալբրուսի բերգի անջատական ներկայացուցիչները չէին դրանք, այդ տիեզերական հանձարները, այլ Գ եր մ ա ն ի ա յ ի

գաւակներ — այդպէս էր ճանաչում նրանց աշխարհը, այդպէս էին ճանաչում նրանց գերմանական ազգի ցիր ցան տարրերը, բախտի բերմամբ բաժանած ու իրարու թշնամի գերմանական կանտոնները: Եւ նրանք պարծենում էին այդ անուններով, սնում, դաստիարակում էին դրանց անմահ երկերով: Զենք մոռացել, անշուշտ, ազատագրական այն վեճի թուիչը, որը Բօնապարտեան արշաւանքների միջոցին ոտքի հանեց ամբողջ Գերմանիան, յանուն ոտնակոխ ու բռնաբարած հայրենիքի: Զենք մոռացել անշուշտ, Վեօրնէրի, Ֆիխտէի և այլոց սրտառուէ ու գերազանցապէս հայրենասիրական քարոզները տակաւին դարու սկզբներում... Որքան մեծ զարկ էր այդ ամէնը ազգային ինքնաճանաչութեան և ապագայ Միացեալ Հայրենիքի նախապատրաստութեան համար: Ընդհանուր գրականութիւն ու լեզու, թատրոն, գիտութիւն ու փիլիսոփայութիւն և վերջապէս տնտեսական պայմաններ — ահա ապիկ այն խոշոր մտնտները, որոնց վրայ պէտք է ծանրանալ երբ ուզում ենք լուսաբանել մեզ «Գերմանական Միութեան» նախապատմութիւնը:

Այո՛, նաև տնտեսական պայմաններ: Մեքենայական արդիւնաբերութիւնը, որ ինչպէս արդէն տեսանք, 50-ական թւականներում ներմուծել էր եւրոպական ցամաքային երկիրները, ստեղծեց կարճ միջոցում ընդհանուր միջազգային վաճառանոց, որի հետեւանքն էր տեղային մրցակցութիւն արդիւնաբերող այլևայլ ազգերի մէջ: Իւրաքանչիւրը նրանցից ձգտում էր շուտընդհատ իւրացնել արդիւնաբերական յառադրիմութիւնները, որ մինչ այն Մեծ-Բրիտանիայի բացառիկ մենաշնորհն էր, և ոչնչացնել հին, աւատական սիստէմի հետ կապած այն պայմանները, որոնք արգելք էին լինում տեղական ինդուստրիայի առաջադիմութեան: Իւրաքանչիւրը ձգտում էր այդպիսով վայելուէ տեղ բռնել միջազգային շուկայում և թող չտալ ուրիշին գրաւելու իր սեփական, ազգային վաճառանոցը: Գերմանիան ևս այդ մրցակցութիւնից դուրս չմնալու համար կարօտ էր խորունկ բարենորոգումների: Ներսում բարգաւաճելու և արտաքին աշխարհում հմայք ձեռք բերելու համար՝ անհրաժեշտ էր վերացնել ներքին երկպառակութիւնները, մանր-մունր պետութիւնների փոխադարձ թշնամութիւնը, անջատական ոգին, պէտք էր հարթել միջնադարեան պարտիկուլարիզմի մնացորդները, մաքսային կաշկանդող ուժերը, տարբեր դրամներն ու ծանրութեան չափերը և լին և լին: Պէտք էր վերջապէս կազմակերպել հզօր ու մնայուն զօրք, որը կարողանար անհրաժեշտ դիպածներում հպարտ ու աներկիւղ ծածանեցնել գերմանական դրօշը համաշխարհային մրցման կրկէսում: Ահա ապիկ պահանջներ, անդիմադրելի, հրամայական՝ որոնք ուրիշ, գաղափարական պատճառների հետ օղակաւորած՝ զգացնել էին տալիս գերմանական ազգին և մասնաւորապէս իշխող տարրերին՝ մէկ ամբողջական, ձոյլ հայրենիքի անհրաժեշտութիւնը: Օտտօ Բիսմարկ կրօղ (Fräger) հանդիսացաւ համազգային այդ գիտակցութեան և քսան տարւայ մէջ իրագործեց Միութեան իրէալը, մակիափէլական բարբարոս քաղաքականութեամբ, արեան ու երկաթի ճանապարհով: Նրա ծրագրին էր՝ նախ հարւածել Աւստրիային, որը գերիշխող դիրք ունէր գերման պետութիւնների դաշնակցութեան մէջ, ու այդպիսով ապահովել Պրուս-

սիայի առաջնութիւնը գերմանական աշխարհում և ապա հարւածել Ֆրանսիային ու ձեռք բերել առաջնութիւն ամբողջ Եւրոպայում:

Եւ նա սկսեց մի քաղաքականութիւն, որի նշանաբանն էր՝ «ուժը վեր է իրաւունքից»: Այդ սկզբունքի առաջին կիրառումը եղաւ Շլեզվիգ-Հօլշտայնի յափշտակումը և Գանեմարքի անդամատումը պրուս-աւստրիական դաշնակից դորբերով: Շլեզվիգ-Հօլշտայն և Լաուէնբուրգ՝ դառնալով երկու հզօրագոյն գերման պետութիւնների ընդհանուր սեփականութիւն՝ եղան շուտով տարածանութեան ու սուր պայքարի աղբիւր երկուսի միջև: Աւստրիա և Պրուսիա՝ միանգամայն հակառակ քաղաքական ձգտումներով՝ պիտի վաղ թէ ուշ բաղխէին իրար, և երկու տարի չանցած՝ պատերազմը յայտարարւեց... Հետեւեալը յայտնի է — աւստրիական զօրքի ջարդը Սադօվայում 3 յուլիսի 1866: Աւստրիան արտաքսւեց գերմանական դաշնակցութիւնից, և Պրուսիան ստացաւ գերակշռող դեր, որով բիսմարկեան ծրագրի մի կարեւոր մասը լրացաւ արդէն:

Նապօլէօն III, որ սպասում էր Պրուսիայի պարտութեան՝ խիստ դժգոհ եղաւ պատերազմի ելքից և սկսեց խստաբար հատուցում պահանջել Պրուսիայից, փոխարէն այն ծառայութեան, որ նա մատուցել էր այդ վերջինին իր չէզօքութեամբ պատերազմի ժամանակ: Այդ պահանջնու դիրքը աւելի քան հաճելի էր Բիսմարկին. նրան պէտք էր մի պատուակ, որով կարողանար նա փութացնել այն բաղձալի ընդհարումը, որը պիտի իրականացնէր իր փայտայած ծրագիրը, և նա իր կողմից ոչ մի միջոց չէնայից՝ աւելի և աւելի գրգռելու նապօլէօնին: Աւերջինս չըմբռնեց այդ: Պահանջ պահանջի ետեւից, մինը միւսից ամբարտաւան ու վերաւորիչ, ուղղւեցին պրուսական դիւանատան և երկու պետութիւնների յարաբերութիւնները դարձան միշտ աւելի սուր, պատերազմական: Հօհենցօլլերն իշխանի թեկնածութիւնը սպանիական դահլին՝ նետեց վերջապէս կայծը վառօդի տակառի մէջ: Ծայրայեղ անզգուշութեամբ, հազւագիւտ, անորակելի թեթեւատուութեամբ՝ նապօլէօն III պատերազմ յայտարարեց Պրուսիային 19 յուլիս 1870... Բիսմարկ վեր բարձրացրեց ձեռնոցը, և երկու արևմտեան քաղաքակիրթ ազգեր դուրս եկան ահեղ մենամարտութեան:

Բախտը ժպտում էր Պրուսիային. ամբողջ Գերմանիան խոստանում էր նրան գործօն աջակցութիւն: Արաւորած ազգային հպարտութիւնը դրոհ տւեց գերմանական բոլոր կանտոններից և անթիւ լեգիօններ, երկաթէ, զինավարժ՝ Մօլտկէի հրամանատարութեան տակ գահավէժ սլացան դէպի սահմանագլուխ:

«Դէպի Բերլին»... հնչեց Հոէննօսի միւս կողմը տարածող դիւցազնական աշխարհից: «Դէպի Բերլին» որոտացին հարիւր հազարաւոր բերաններ այն երկրից, որը երբէք տեղաբար չէր խոնարհուէ ոչ մի արտաքին կամ ներքին թշնամու առաջ և որի խանդավառ դաւակները 1792-ին արիութեան հրաշքներ գործեցին, դիմադրելով ամբողջ պաշտօնական, դաշնակից Եւրոպայի արշաւանքին: Աւաղ... Հասել էր եղբրական ժամը, երբ խաբւած ու դաւաճանւած իր անարժան վարիչներից նա պիտի ձկէր իր հպարտ պարանոցը թշնամու սրի առաջ, պիտի ընկճէր ու անձնատուր լինէր՝ ամօթահար, ոչնչացած...»

Ֆրանսիան անպատրաստ էր: Նապոլեոն III յոյս էր դրել գաշնակիցների վրայ, բայց ոչ որ Հյայանեցի: Ռուսաստանը չէր կարող մոռանալ այն բուռն համակրութիւնները, որ Ֆրանսիայի թագաւորը յայտնում էր քիչ առաջ ապստամբ լեհերին: Աւստրիան ու Իտալիան էլ խոստանում էին օգնութիւն միմիայն այն ժամանակ երբ Ֆրանսիական զօրքը կը տանէր առաջին փայլուն յաղթութիւնը: Վստահելի գաշնակիցներից զուրկ՝ նապոլեոն III-ի կառավարութիւնը չէր հոգացել անգամ ամենատարրական նախապատրաստական միջոցների մասին, և ահա հէնց առաջին քայլերից՝ Ֆրանսիացիք ջարդ կրեցին Վիսսեմբուրգում, Ֆրոշվիլէրում, Ֆորբախում, ուր յարձակողական դիրք էին բռնել Մակ-Մասոնի ընդհանուր հրամանատարութեան տակ: Գերմանացիք ներս խուժեցին Էլզաս-Լոտարինգիա... ընդմիջ Տաստաւելու անտեղ: Մեց, Ըտրասբուրգ և ուրիշ ամրութիւններ մին-միւսի ետեւից թշնամու ձեռքն անցան և նապոլեոն III գերի բռնեց Սեգանում՝ 84,000 զօրքով... Ներքին արհաւիրքներին ակեղացաւ շուտով ամենածանր, ամենասոսկալի հարւածը — դաւաճանութիւնը: Բագէն, որ իբրև փորձառու, հեղինակաւոր զօրավար՝ ընդհանուր հրամանատարութիւն էր ստանձնել Լոտարինգիայում, պաղարիւն ու կորովի զինւոր, բայց և եսամոլ ու փառասենչ, հայրենիքի գերագոյն շահերը իր ոճրագործ էգօրիզմին ստորդրող Բագէն՝ առաջին ջարդերի լուրն առնելով և արդէն նախատեսելով խաղաղութեան դաշինքի անխուսափելի ստորագրումը, գիտակցաբար անշարժութեան դատապարտեց իր կազմ ու պատրաստ գնդերը, պատերազմի ծարաւ ու դիմագրութեան ընդունակ՝ մօտ 200,000 Ֆրանսիական զօրքը:

Նա գիտէր, որ թագաւորը գերի էր բռնած, թագաժողովը՝ Անգլիա ապաստանած. նա գիտէր, որ կայսրութիւնը տապալել էր և որ հանրապետական դրօշն էր պարզել Ֆրանսիայի մայրաքաղաքում... Ո՛վ պիտի լինէր հայրենիքի պաշտպանը այդ անորոշ վիճակում, այդ գերագոյն ճգնաժամին, եթէ ոչ նա ինքը՝ Բագէն... Եւ խաղաղութիւնը անձամբ ստորագրելու տենչով՝ նա շտապեց բանակցութեան մտնել թըշնամու հետ: Բիսմարկ, նենգամիտ քաղաքագէտը, ոչ մի միջոց չէնայեց՝ շոյելու Բագէնի փառամոլութիւնը, չէզօքացնելու նրա ուժը և այդպիսով ապահովելու գերմանական զօրքի յաղթական ընթացքը գէպի Պարիզ: Եւ նա հասաւ իր նպատակին. Բագէն յօժարակամ անձնատուր եղաւ, և Ֆրանսիական լաւագոյն զօրքը պատերազմական միջերընտրով յանձնեց թշնամուն...

Սեգան... Ատաստրօֆի լուրը կայծակի արագութեամբ տարածեց Ֆրանսիայի բոլոր անկիւններում: Երկիրը ցնցեց և մի վայրկեան չէր ուզում հաւատալ սարսափելի եղելութեանը: Սոսկումն ու արհաւիրքը կրկնապատկեցին, երբ միլիոնաւոր արձագանքներով որոտաց Ֆրանսիայում Գամբետտայի լալագին ձիւղ՝ «Բագէն դաւաճանեց»... Պարիզը խլրտաց, և հազարաւոր բերաններից դուրս թուաւ մոլեգին աղաղակը՝ «կեցցէ՛ հանրապետութիւն»: Սեպտեմբեր 3-4 (1870) դիշերը ծիւղ Փափո՝ յայտարարեց Օրէնսգիր ժողովում կայսրութեան տապալումը: Յեղափոխական տրամադրութիւնը աճեց, շարժումը սաստկացաւ: Ասեպտեմբերի անմոռա-

նալի օրը ամբողջ պաշարեց ազգային պատգամաւորական ժողովը. սենատը լուծեց, և մինչ Գամբետտա ընդհանուր խանդավառութեան մէջ ծանուցանում էր հանրապետութեան հաստատումը, թագուհին ու արքայական կուսակցութեան պարագլուխները փախուստ տւին Անգլիա: Այդպիսով մէկ օրւայ մէջ օդը ցնդեց ոճիրով ու դաւաճանութեամբ վերականգնած կայսրութեան գարշելի մեքենան: Երբ որ գահանրապետութիւնն էր հաստատում Ֆրանսիական հողի վրայ, երրորդը... յուսանք, և վերջինը:

Հանրապետական կառավարութիւնը տենդային արագութեամբ սկսեց կազմակերպել «հազարային պաշտպանութեան» գործը: Պէտք էր կոչ անել ամբողջ երկրին, պէտք էր գէթ մասամբ վերականգնել Ֆրանսիայի արատաւորած պատիւը: Եւ ահա Գամբետտա, մեծ հայրենասէրը, սկսեց իր նշանաւոր, դիւցազնեղգական պտոյտը: Իբրև մարմնացած վեճիւնդուլութիւն՝ Ֆրանսիայի երկրորդ Միրաբոն թուում էր անդադար դաւաճից-գաւաւա և մոլեգին ճարտասանութեամբ բոցավառում էր ունկնդիրներին: «Պէտք է՛, հայրենակիցներ, որ Ֆրանսիական հանձարը խաւարէ ընդմիշտ և որ մեծ ազգը զիջանէ իր համաշխարհային դիրքը 500,000 զօրքի արշաւանքի առաջ... Երգւում ենք անսասան մնալ արհաւիրքի մէջ երգւում ենք յետ չնահանջել և քանի գեւ կը մնայ մեր ոտքերի տակ մի փոքրիկ կտոր մեր սուրբ հողից, մենք մեր ձեռքում պինդ կը պահենք Ֆրանսիական Յեղափոխութեան յաղթապանձ դրօշը»... Չայնը շառաչում էր հզօր էլէկտրոնով և նրա հմայիչ աղջեցութեան տակ տասնեակ հազարաւոր հայրենասէրներ վազում էին ժողովրդային տրիբունի ետեւից: Հանդիսաւոր վայրկեան, երբէք հայրենիքի բախտը այդքան անագորոյն խաղ չէր խաղացել...

Օր աւուր ստաւորանում էր կամաւորների զօրքը և մաս-մաս դասաւորում էր Պարիզի հիւսիսում ու արևելքում: Կամաւորներ խուժը-խուժը գալիս էին նաև հարևան երկրներից: Իտալիայից եկաւ Գարիբալդի փոքրիկ բանակով ու իր երկու սրգիններով (Մենտոտի և Ռիչիոտտի) և ջարդ տւեց գերմանացիներին Գիօժոն քաղաքում: «Ազգային պաշտպանութեան» բանակը կազմում էին մեծ մասամբ խիզախներ, անձնագոհութեան ընդունակ, բայց կուր համար անվարժ, անդիսցիպլին: Առում էին նրանք ոչ թէ յաղթելու յուսով, այլ միայն պարտքի զգացումից՝ մղած, այն սրբազան պարտքի, որ թելագրում էր ազգային պատիւը փրկելու անողոք անհրաժեշտութիւնը: Մի քանի կէտերում քաղութեան հրաշքներ գործեց այդ խառնիճաղանձ բանակը: Յիշատակելի է մանաւանդ Բելլֆօրի երկարատև, յամառ ու յուսահատ մաքառումը: Բայց Ֆրանսիացիների յաղթութիւնը կարճատև էր լինում: Թշնամու քանակական առաւելութիւնը՝ ձնշող: Եւ նա առաջ էր սլանում, արիւն ու արտասուք ցանելով, նա արագաքայլ մտնում էր իր բաղձալի նպատակակէտին... Պարիզին: Սեպտեմբերի վերջերում գերմանական զօրքի մի մասը շրջապատել էր արդէն հոյակապ մայրաքաղաքը և Պրուսիայի թագաւոր Վիլհելմ I իր զօրաբանակի կայանն էր հաստատել Վերսայլում: Այսուհետ հայնուհետև չորս-ամսեայ յիշատակելի պաշարումը, որ յայտնի է պատմութեան մէջ իր աղետարէ մանրամասնութիւններով: Գաւառներում «հազարային պաշտպանութեան» զօրքի մնացորդները շարունակեալ էին հերո-

սակն դիմադրութիւնը: Գեկտեմբեր ամսում գերմանացիք սկսեցին ուժեղանալ Պարիզը: Ներսից պատասխանում էին նոյն որոտումներով... Բայց երկար կը տևէր արդեօք... Յուսատու ոչինչ չկար, օգնութեան ձեռք — ոչ մի կողմից: Պարիզը պաշարուած, լքուած գաւառներից և՛ ամբողջ աշխարհից, ջարդուած բոլոր կէտերում՝ պիտի անձնատուր լինէր անխուսափելի կերպով: Սովը լրացրեց ամէն ինչ: Նոյեմբերի 20-ից եղ ու ոչխարի միս չկար այլևս, և պաշարածները ուտում էին ձի, կատու և ուրիշ կենդանիներ: Բայց այդ էլ սպառուած էր: Յունւարի 23-ին (1871) Թիւլ Ֆերրի, արտաքին գործերի նախարարը, կորագլուխ դիմեց Վերսալը թշնամու բանակը՝ զինագույն խնդրելու՝ ներսում «կուռող» տարրերը ըմբոստացան. Գամբետտա՝ խրախուսուած հարաւային Ֆրանսիայի խանդավառ ցոյցերից՝ պահանջում էր կռիւ, անհաշտ, անդադրում, մինչև արեան վերջին կաթիլը... Մեծ հայրենասէրի ձայնը չլսեց, և փետրւարի 26-ին Յիէր, գործադիր իշխանութեան գլուխը, Բիսմարկի հետ բանակցելով՝ սահմանեցին նախնական պայմանները խաղաղութեան, որ և ստորագրեց մարտի 1-ին: Ֆրանսիան յանձնուած էր Պրուսիային էլ զատուտ արին գիտն և պարտաւորուած էր վճարել հինգ միլիարդ պատերազմական տոկոսանք...
 Կատարեց...

Թշնամու բանակը ցնծում էր հանդիսաւոր ու յաղթական տրամադրութեան մէջ: Ամբողջ միացեալ Գերմանիան էր խրախուսեց կատարում: Բիսմարկ՝ դիւային Ժպիտը երեսին՝ խաղում էր իր դժբախտ զօհի հետ, ինչպէս կատուն կը խաղայ իր ձանկերում գալարուող մկան հետ: Ամբողջ Եւրոպան սարսափով էր արտասանում ահեղ կամայապետի անունը: Ամբողջ Գերմանիան մի վայրենի խանդավառութեամբ բռնած՝ խունկ էր ծխում արեան ու երկաթի ներկայացուցչին, և շովինիզմը լայն յորձանք տալով, խրոխտ ու ամբարտաւան՝ հնչեցնում էր քաղաքակրթուած աշխարհի դիմաց ատելի յանկերգը՝ Deutschland über alles!...

Ֆրանսիան հոգեվարքի մէջ էր: Մայրաքաղաք Պարիզը ծփում էր անսովոր ալէկոծութեան մէջ ուռչում, փրփրում էր և իր ահարկու դրոգիւններով ուզում էր կարծէք սասանեցնել ամբողջ երկրագունդը: Այնտեղ կատարում էր մի սարսափելի դրամա, որի նմանը երբէք չէր տեսնուած: Պարիզի տարեգրութեան մէջ նոյնիսկ Մեծ Յեղափոխութեան դիւցազնական օրերում: Բանուորները ապստամբել էին և տիրացել մայրաքաղաքին: «Կոմունան» էր, հռչակաւոր, անմոռանալի կոմունան, որ հայրենիքի օրհասական ընդհանր կարմիր դրոշակը պարզելով եկել էր բարձրաձայն աւետելու աշխարհին բոլոր տառապեալների վերջնական ազատուած քաղաքական ու սօցիալական անարգ գերութիւնից: Պարիզը մոնչում էր և թշուառ, հայածական մարդկութիւնը տիեզերքի բոլոր ծայրերից խուլ ձայնակցում էր նրա որոտումներին, մինչդեռ իշխող դասակարգերը և տիրանները բոլոր երկրներում մահու զարգանդով համակուած՝ ողբում էին արդէն կապիտալիզմի պայծառ արեգակի մօտալուտ խաւարումը...

Սերանի ամօթալի կապիտուլացիան, Բազէնի դաւաճանութիւնը, յաղթուած հայրենիքի ծովածաւալ արիւնը,

սողն ու արհաւիրքները և այդ բոլորից յետոյ կառավարութեան, իշխողների անարգ ստորացումը թշնամու առաջ... — Պարիզը տանէր այդքան անարգանք... Պարիզը, այդ ներվոտ, հրեղէն զանգածը, այդ մշտաբորբոք հրաբուխը: Պէտք էր ըմբոստանալ ու յետ նաւաճել իր դիրքը հայրենիքում և ամբողջ տիեզերքում: Եւ ահա 18 մարտ (1871) պատմական օրը, վաղ առաւօտեան, Պարիզը սպառազէն ոտքի կանգնեց «Կեցցէ՛ Կոմունան» որոտընդոստ աղաղակներով և կռիւ յայտարարեց Վերսալը ապստամբ հայրենի կառավարութեան: Քաղաքացիական կռիւ... «Նա երկար տևեց — ամբողջ երկու ամիս: Եւ երկու ամիս շարունակ ապստամբ «Կոմունան» կամ բանուոր դասակարգը տէր էր Պարիզին ու ամբողջ Ֆրանսիային. երկու ամիս շարունակ ընկերվարական կարմիր դրօշը ծածանւում էր Hôtel de Ville-ի բարձրութեան վրայ: Չտեսնուած օրեր էին: Մինչ Կոմունայի անձնէր գնդերը Պարիզի պարիսպներից կարկուտ էին թափում քաղաքը պաշարող թշնամու և Ֆրանսիական պաշտօնական զօրքերի վրայ, — «Կոմունիստները» ներսում՝ օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնները իրենց ձեռքը ձգած՝ տակն ու վրայ էին անում տիրող կարգերը, հոյակապ նախագիծ էին մշակում ամբողջ Ֆրանսիայի յեղաշրջման ընկերվարական, կոմունիստական խարխուների վրայ: Կոմունայի անդամների մեծամասնութիւնը բրանկիստներ էին, հռչակաւոր Բլանկիի հետևողներ. փոքրամասնութիւնը՝ պրուզօնիստներ և մարքսիստներ — «Միջազգային Բանուորական Դաշնակցութեան» անդամներ: Համբարախութիւնը կատարեալ էր: Սօցիալիստական կառավարութեան առաջին գործը եղաւ վերացնել մշտական զօրքը և զինուորութեան հրաւիրել բոլոր Ֆրանսիական քաղաքացիներին: Դրանից յետոյ նա մի հրամանագրով բաժանեց եկեղեցին պետութիւնից և ջնջեց այն բոլոր ծախքերը, որ սահմանուած էին կրօնական նպատակների համար: Կրօնը անհատական խղճի գործ հրատարակեց և կրօնաւորների կայքը ժողովուրդին յանձնեց: Դպրոցական գործը ազատեց եկեղեցու ու պետութեան ազդեցութիւնից և ուտումը ձրի հռչակեց ժողովուրդային բոլոր խաւերի համար: Բիոտինը, մահաւան այդ սոսկալի գործիքը, հրապարակ հանւեց և ժողովուրդի ընդհանուր ցնծութեան մէջ կրակի մատնեց: Վանդալ հրապարակի վրայ 1809-ի նապօլէոնեան պատերազմի թնդանութեան ձուլուած յաղթական կամարը հանդիսաւոր կերպով ոչնչացրեց նոյնպէս. «Կոմունայի դրօշը համաշխարհային հանրապետութեան դրօշն էր» և չէր կարող հանդուրժել, որ իր թագաւորութեան մէջ կանգուն մնար այդպիսի մի արձան, որ խորհրդանշան էր շովինիզմի, վայրենի ուժի և ազգերի ատելութեան:

Քաղաքական, զինուորական խորունկ յեղաշրջումների հետ զուգընթացաբար կատարում էր տնտեսական յեղաշրջումը: Ապրիլի 16-ին Կոմունայի կառավարութիւնը հրահանգեց մշակել մի յատակագիծ, որի համեմատ պարիզեան բոլոր գործարանները, արդիւնաբերութեան բոլոր ձիւղերը դրւում էին բանուորների տրամադրութեան տակ՝ ընկերակցական (խօսակցարար) կազմակերպութիւնների հոդի վրայ...
 Ապագայ մարդկային հասարակութեան արշալոյսն էր դա, որ ծագեց այդքան անակնկալ կերպով Պարիզի աւերակների վրայ, վայրկենաբար լուսաւորեց բռնակալութեան ձանկերում հեծեծող մարդկութեան խարխափող

գիտակցութիւնը և ապա... մարեց: Նա վաղաժամ էր: Պարիզը երկար չէր կարող դիմադրել նրան անբնդ-հաս ուժակոծում՝ էին: և ուժակոծողը—որպիսի հէզ-նութիւն — այժմ Ֆրանսիական կառավարութիւնն էր, Պարիզից մերժած, վտարած կառավարութիւնը, որը երբեք էր ամէն միջոցի դիմել նոյնիսկ Բիսմարկի օգ-նութիւնը հայցել, միայն թէ յաղթահարէր «Վոմու-նիզմի» սարսափեցնող ուրակները: Մեցի ու Սեզանի մարտագաշտերից Բիսմարկի յօժարութեամբ յետ կան-չեցին գերի բռնած Ֆրանսիական դնդերը և թափեցին նրանց մայրաքաղաքի վրայ: Նրկու ամիս զարմանալի տոկունութեամբ Պարիզը միջոց մահաւան պայքարը, բայց իվերջոյ Վերսալի ուժերը գերակշռեցին, Պարիզն ընկաւ... «Տիեզերական հանրապետութեան» ուժակոծողները վեր-ջին յուսահատ ձեռնարկները տւին Վոմուստրի ու Բեյլիլի բարձունքների վրայ և դէնքը ձեռքն ընկան գնդակահար, արիւնշաղաղ բարրիկապների տակ...

Վերսալի զորքերը յաղթական ուժաներով ներս արշաւեցին և կաղմակերպեց մի անօրինակ, մի սարսա-փելի ջարդ: Պարիզը դարձաւ մարդկային սպանդանոց: Վոտորում էին յեղափոխականներին, հարկւններով հա-ղաւորներով կապում էին իրարից և հրացանի բռնում, ծեր, կին, մանուկ—չէին խնայում: Մի ամբողջ շաբաթ տեւեց խողխողման այդ գազանային արարողութիւնը, «էակցիան» խեղկոյոյս, անզուսպ ու վայրագ ատելու-թեամբ լցած՝ ծծում էր իր հարազատների արիւնը, այն չնաշխարհիկ հոգիների, որոնք եկել էին բռնա-կալութեան փլատակների վրայ պատաստելու վերջապէս մարդկային ճշմարիտ ազատագրութեան գաղափարը... Պարիզը ընկաւ իսպառ արիւնքամ, դիակնացած: 25,000 այր, կին, երեխայ կուռ մէջ կոտորեցին կամ կուռից յետոյ խողխողեցին: Մօտ 3,000 բանտերում հիւժու-ցին, մեռան: Մօտ 14,000 դատապարտեցին ցմահ աք-սորի և գնացին լցնելու Նոր-Վալէզօնեայի արևակէզ խորշերը: Մօտ 70,000 դուրս քշեցին հայրենիքից և ապաստանեցին Չիլիի, Արժենտինայի և Մեքսիկայի հիւր-ընկալ վայրերը, ուր երկար տարիներ ողբացին իրենց սև ձեռնարկները, մատնած ի սաստ բախտի և կեանքի ախրների...

Այդպէս վրէժխնդիր եղաւ բուրժուազական Նեմէզի-դան Երբէք նա այնքան անսիրտ չէր եղել նոյնիսկ 1848-ի «Պունիսեան օրերին»: Երբէք պրօլետարիատ և բուրժուազիա այդքան մոլեղնութեամբ չէին բաղխել իրար, երբէք անդունդը երկու հակամարտ գաստկարգերի միջև չէր բացուել այդքան խոր, աննիցանելի

«Արիւնոտ շաբաթ»... այդպէս է կոչում մասսային ջարդերի այդ տխուր շրջանը Ֆրանսիական պատմու-թեան մէջ: Նա արձանագրած է արեան տառերով: Վարձ է արդեօք պրօլետարիատը մոռանալ այդ օրերը... կարող է նա արդեօք անդրադառնալ սև շրջանի վրայ առանց վրէժի ու ատելութեան թոյնը սնուցանելու իր մէջ... Ամէն տարի, արիւնոտ շաբաթուայ այդ տարե-դարձին, դուք կը տեսնէք բանտերական ստաբ լէգիօն-ներ՝ իրենց շէֆերի ուղեկցութեամբ, դրօշակներով ու ծաղկեայ պսակներով՝ ծանրաբայլ դիմում են «Պէր-Լաշէզի» գերեզմանատուն՝ յարգելու այնտեղ հանգչող «կոմունարներին» յիշատակը և... երգելու նրանց շիրմների վրայ — երգում յեղափոխութեան ու հա-մերաշխութեան, երգում՝ հաւատարիմ մնալու կոմուն-

նայի պարզած դրօշակին և պատրաստ դանակու այն վտեմ ու ահաւոր վայրկեանին, երբ «բաղնական քաղորի կանչը կ'ազդարարէ աշխարհին սօցիալական ահեղագոյն կատաստրօֆի ժայթքումը»...

ՄԱՄՈՒԼԻ ԵՆՄՈՒԹԻՒՆ

„LES CHRÉTIENS ET LES MUSULMANS“

par L. CONTENSON

«ԲԻՆՅԱՌՆԵԱՆԵՐ ԵՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ»

Լուրջովիկ կօնտանսօնի

Հայասեր անդենցիան կարծիք գծով անցնում է Լուրջովիկ կօնտանսօնի ամբողջ դրածքի միջից: Հեղե-նակը սովորական կօմպլիքիատօր չէ, այլ խուզարկու ճանապարհորդ, լուրջ գիտական պատրաստականութեամբ: Նրա հայասիրութիւնը կանխակալ մի կարծիք չէ, այլ հետեւանը հայկական իրականութեան խորունկ ուսումնա-սիրութեան: Աճիտ, սրտասուչ լեզուով պատկերացնում է նա Հայաստանի արհաւիրքները, նշաւակում է նրա պատասխանատու հեղինակներին: Երգում է անտիկ Ձէյթունը իր առիւծ գաւազներով ու պարբերական ընդվզումներով: Նկարագրում է այն ահ ու սարսափը, որ ներշնչում է Ձէյթունի անունը ամբողջ Փոքր Հայքի մահաբազաններին: Ողբում է հայութեան լքած վի-ճակը և հուշակում է հայ տարրի անժխտելի առաւե-լութիւնները, նրա մտաւոր ու կուլտուրական գերա-զանցութիւնը Օսմանեան կայսրութեան այլպան ցեղերի Բաբէլօնում:

Թիւրք տարրը ներկայանում է նրան, իբրև արգա-հատանքի արժանի մի ոչնչութիւն, զուրկ ուժե նախա-ձեռնութիւնից, ամէն բան ի վերուստ սպասող, անտար-բեր թէ՛ դէպի բարին, թէ՛ դէպի չարը: Մահաբազան բազմահոշակ «Ֆանատիկոսութիւնը» թւում է նրան չափազանցած. հայկական ջարդերի մէջ նրա դերը չնչին է՝ ըստ հեղինակի:

Ջարդերի պատճառը...

Այդ չարասանը ու տակաւին այժմեութիւն ունեցող պրօլէտը, որ այնքան թունաւորեց հայի գիտակցութիւնը վերջին տարիներում, կրքերը յուզելով ու հակայեղա-փոխական ռէակցիան զօրացնելով — ի նչպէս է արդեօք լուծում նրան եւրօպացի կօնտանսօն...

Այնպէս, ինչպէս շատ ուրիշ եւրօպացիներ, որոնք աշխատել են փոքր ինչ խոր թափանցել հայ ձգնա-ժամի ուսումնասիրութեան մէջ:

Հեղինակը բերում է այդ առթիւ մի թիւրք սպայի խորհրդածութիւնները (եր. 62), որ աւելորդ չենք սեպում կրկնել «Դրօշակում» — այնքան ուշադրաւ է նա հայ «քաղաքագէտների» ֆրազմով բացականչու-թիւնների դիմաց:

«Բասնուկինդ տարի սրանից առաջ — ատում է ծերունի թիւրք սպան — ես նախատեսում էի արդէն այն ինչ կատարել: Ես դիտում էի, թէ ինչպէս ամերիկական միսիօնարները հաստատում էին մեր երկրում եւ երի-տասարդ հայերը նրանց դպրոցներում ստանելով, վա-րակում էին նոր գաղափարներով: Ուրիշ հայ երիտա-սարդներ էլ իրենց ուսումնաւարտելով, դալիս էին եւրօպայից: Երբ պատաւ թիւրքիայի կրակների մէջ

սկսեցին ներս սպրդել այդ կեղծ-եւրօպական տարրերը, եւ հասկացայ, որ ինչ որ վասնդաւոր բան է պատ-
րաստուած Մենք երջանիկ էինք, հանդիսաւ մենք
ապրում էինք արեւելեան կեանքով, մեր հինաւուրց
զեղծութիւնով, որոնք մեր ուզ ու ծածն են դար-
ձել. . . Մեր սուլթանները խոտանում էին սէֆորմներ
իւր կրօնք չէին կիրառում մեր սուլթութիւնները
չխախտելու համար. . .

(Որքան նախանձելի էր մեր վիճակը, երբ մեր
կրօնում կային միայն տեղացի կրօնաւոր քրիստոնէա-
նէր, որոնք ընտել չէին մտածում փոխ առնել ձեր արեւ-
մտեան դաղափարները. . . Կարող էք կրեւակայիւ,
մի օր Սարգիսը ստեայ չորս նորակ հայ երիտա-
սարքներ եւրօպական նոր ձեւի դիւարներով, որ ձեր
հիւպատոսներն են հասնում նրանք դալիս էին ոչ թէ
Պարսիկ կամ Լոնդոնից, այլ պարզապէս Այնթափի
ամերիկական լուսնական վարժարանից, նրանք աւելի
հպարտ էին կրեւում, քան դեսպանները. . . Եւ ահա
ամէնքն սկսեցին խօսել ինքնավարութեան, անկախու-
թեան մասին ու պահանջել, որ աւելի թիւրքը դուրս
բերի հայկական հայրենիքից, Հասկանալի է, որ այդ
բոլորը չէր կարող անցնել առանց ընդհարման, առանց
ցնցումների) . . .

ՊԱՅՆ անշուշտ, սիրելի էֆենտի, — պատասխանում է
Կոստանստնուօյն ծերունի սպային — անխուսափելի էր ար-
դարեւ, որ մի օր պիտի գար, երբ մեր արեւմտեան գա-
ղափարները երեւան կը գային մինչև իսկ թիւրք կայսրու-
թեան մէջ, ուր քրիստոնէայ ազգերը աւելի պատրաստ
պիտի գտնուէին ընդունելու առաջադիմութեան օրէնքը,
մարտելու եւրօպական քաղաքակրթութիւնը, որը յաղթա-
կան կերպով առաջ է դնում ամենուրեք և որին անզօր է
գիմարելու զառամեալ խոյմը: Ամերիկական միսիօնար-
ները չեն պատճառը, այլ միայն շարժման որոշ Ֆազիսը,
որ պիտի առաջանար ճակատագրական կերպով: Խնդիրը
չի կարող վիճաբանութեան դրելը գիւրեմալեաների
նախասննականներում, ինչպէս որ վիճաբանութեան էէր
գրեւում Քրանսիական Յեղափոխութեան շարժումը: Ար-
դէն Թալիանների վճայ երիտասարդ ազգութիւններն ա-
ճել էին իրենց ազատութիւնը: Եղաւ, որ ասիական թիւր-
քիայում հայը, իբրև աւելի բազմաթիւ, աւելի դիմաց-
կուն ու խելացի և աւելի հպարտ, հոչեցաւ տանելու
վիճակուր ծանրութիւնը մի կօւրի որ ոչ այլ ինչ է, եթէ
ոչ կռիւ քաղաքակրթութեան ընդդէմ բարբարոսու-
թեան: Արեւելից կոտորածները արգելք եղան նրան,
բայց կռիւը պէտք է շարունակել անգուց ու անագորոյն. . .

Սոսկ իրերի տրամաբանութիւնը ուսուցանում է մեզ,
որ մի ահել ճայթիւն անկուսափելի կերպով պիտի
առաջ գար ասիական թիւրքիայում, հէնց որ ամենակո-
րովի և ամենաօտուած ժողովուրդը այդ երկրում վա-
րակէր նոր գաղափարների հասնելով ու նրանց հետ
օղակաւորած անհամար պահանջներով. . . Եւ այդ ճայ-
թիւնը առաջ եկաւ աչեցուցիչ չափերով (եր. 111):

Սակայն — ստում է հեղինակը (եր. 147) — փորձել
ընչեւ հայկական հարցը հայ ազգութիւնը ոչնչացնելով,
գա վեր է մի կառավարութեան ուժերից և մասնաւո-
րապէս տաճիկ կառավարութեան. . . Հայկական ինքիւրը
պիտի յարասեւ, քանի դեռ կապրեն հայ անուն կրող
անհատներ, և նա դեռ աւելի ևս սուր կերպարանք
կը ստանայ մեր ժամանակում, ուր իւրաքանչիւր ժողո-
վուրդ մամուլի, գրքերի ու գրականութեան օգնութեամբ
հասնում է ինքնագիտակցութեան և պահանջում է
իր քաժին ա զ յ ա տ ո լ թ իւ ռ ը . . .

Կրօնը եւ այն է հայասէր անկախութիւն թիւրք Լեւոնտի

առաջարկը, որ գրեթէ ամբողջապէս նւիրուած է հայկա-
կան հարցին: Պղ Քրանսիան — ստում է նա — պիտի յուզ-
ւէր այդ հետաքրքրի ժողովուրդի վիճակով, որը կուում
է յանուն ազատութեան թիւրք կայսրութեան դէմ,
ինչպէս որ բոյէրներն են կուում՝ ընդդէմ անգլիական
իմպերիալիզմի: . .

Այդպիսով գրքի ընդհանուր բովանդակութիւնը այն-
քան յափշտակիչ է և խրատուող, որ, հասկանալի է,
մենք չենք կարող կանգ առնել ոչ առաջարկում մի
շարք մեծանուն և մեծահոգի Քրանսիացիների հասցէին
ուղղած արհամարհանքի և ոչ էլ գրքի մէջ յարգելի
հեղինակի մի քանի թուոցիկ ակնարկների վճայ հայ
յեղափոխականների մասին:

Թ Ե Ր Թ Օ Ն

Պ Ո Ւ Կ Ա Ր Ի Ո Յ

Ա Պ Ր Ի Լ Է Ա Ն Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

(ԸՍՍՍՆԵՆՏՆԳԱՄՍՏՅՍ ՏԱՐԵԳԱՐՁՈՒ ԱՌԹՈՒՆ)

(Շարունակութիւն. — Տես N° 3)

Դառնանք Բանակիրելիքէ, ուր դէպքերը կը սպասնու-
Պէնքօլսքի մեկնելէն յետոյ (զինուորական խորհուրդը)
ղինքը (Սրէտնա-Կորայի առժամանակեայ պուլկար կա-
ռավարութիւն) յայտարարեց ևս այս խորհուրդով կիւր
մը շինել աւաւ:

Թաթար-Բաղարձըքի, Ռիլիպպէի, Սօֆիայի, Էսիլնէի
և Պոլսոյ թիւրք իշխանութիւնները Բանակիրելիքէի
ապստամբութեան յայտարարել տեղեկացած էին: Յի-
լիպպէի միւլթէսարիքը՝ 200 ձիւոր առած ևս քանի մը
թիւրք ու պուլկար շոյեր հետք Բանակիրելիքէ ճա-
նապարհ ինկաւ ապստամբութեան առաջըն առնելու:
Բայց դեռ Բանակիրելիքէի չմտեցած՝ թրքալուսկ գիւղի
մը մէջ մանրամասն լուրեր առնելով՝ սիրտ չէր ընել
աւելի առաջ քալելու: Միւլթէսարիքը Էսիլնէն եւ
Պոլսէն հրահանգի կը սպասէր, Հազիւ երկու օր յետոյ
կ'որոշի 1,000 զինուոր ուղարկել թիւրանթօթածիզ Հափըզ
փալայի հրամանատարութեամբ: Փաշան Սթրէլլայի վրելը
հասնելով ևս տեղւոյն ու գիրքին վրայ լուրջ ուսում
նասիրութիւն մը ընկող, Յիլիպպէն 2,000 հոգի ևս
կը պահանջէ, մինչդեռ 3,000 հետուակ և 600 ձիւոր
զօրք կուղարկել Ատիլի և Սէլեանի փաշաների առաջ-
նորդութեամբ: Փաշաները կ'արձ բանակցութեան յետոյ
խաղաղ միջոցներով կուզեն ապստամբութեան առաջը
առնել ևս երկու անգամ նամակով կտաջարկեն որ
ապստամբները ղէնքերնին յանձնեն ևս ամէն մարդ իր
գործին նայի: Սակայն (Առժամանակեայ կառավարու-
թիւնը), ատոր ոչինչ կը պատասխանէ: Պօպէքօլ նա-
մակները կը պատահէ ևս 200 հոգիով Սթրէլլայի վրելի
ամբուլթիւններուն պաշտպանութիւնը ձեռք կ'առնէ՝ յիշե-
ցնելով իր պլանդներուն: (Մենք մեր դուռը լսումս
թիւրամիտի դէմ կ'ելլենք, չկարծէք որ հարսնիք կ'ընթանք,
հարսնիքի համար է որ պիտի մտնինք):

Բանակիրելիքէն հարաւէն ու արեւելքէն 4,000 կանու-
նաւոր թիւրք զօրքերէ պաշարուած էր: Ապրիլ 26-ին,
Սթրէլլայի ղիրքի մօտ, առաջին հրացանաձուլութիւնը
սկսաւ: Կռիւը երկար չտեւել, թիւրքերը Սթրէլլայ
վերադարձան, ապստամբներն ալ Բանակիրելիքէի եկան,
որովհետեւ հեղեղանման անձրեւ մը սկսել էր տեղալ
Առաւօտեան, ապրիլ 27-ին, Սօքքօլ 300 հոգիով կը
հասնի նոյն ղիրքերու վրայ, ու անպարտու հրացա-
նաձուլութիւն մը կը սկսուի երկու կողմէն: Թիւրքերը իրե-
կուան դէմ կը քաշուին, յաջողելով ապստամբներէն
զուլայի մը ձերբակալել: Կ'ենթադրուի որ այս պիտի

ցին իմացուցած ըլլայ թիւրքերուն թէ ապաստաններուն մէջ ոչ ուս.ս կայ եւ ոչ ալ սերայ: վասնորի, մինչդեռ թիւրքերը մինչև այդ ատենը շատ զգոյշ էին եւ վճարական ընդհարումներէ կը խուսափէին, ապրիլի 28-ին մուշկնոս յարձակումներով չորս կողմէն խուժեցին Չերէշչա գետի գիրքը պաշտպանողներուն վրայ եւ ստիպեցին անոնց քաշուի Բանակիր-թիւթէի դիրքերը — Պալապանօվի ան. սառը, Հոգ է, որ ապրիլ 29-ին արիւնհանդ կռիւ մը տեղի կունենայ: Մաս 2,000 կանանու որ զօրք անտառը մանկ կուզէ, իսկ 800-700 հոգի լաւ գիրքեր բռնած՝ կը պաշտպանեն եւ զօրաւոր ընդդիմութիւն մը ցոյց կուտան: Սակայն վերջիվերջոյ պաշտպանողները կը հարկադրուին իրենց դիրքերը թողուլ, որովհետեւ անեքիլ ուժի առաջ՝ ալ անկարող էին դէժ գնելու: Ապրիլ 30-ին ստիպարները Բանակիր-թիւթէի շրջակայ ըլլաւորներու նախապէս պատրաստած բարձր ամրութիւններու վրայ կը հաստատուին, ուր էին նաեւ պատմական սիւս յտի թնդանօթները: Սակայն թիւրքերը միեւնոյն յանդուգն խուժանքները հոս եւս կրկնեցին, ալ առանց վախի, մինչև իսկ արձամարնելով այդ անակնկալ դիմադրութիւնը, որովհետեւ ալ հանողած էին որ միայն բուլղարներու հետ գործ ունին:

Թիւրքերը բոլոր ամրութիւնները, պատնէշները իրարու ետեւէ զրաւեցին եւ անթափանցելի զինուորական օդակ մը կազմած՝ չորս կողմէն Բանակիր-թիւթէն պաշարեցին: Մի անգամ եւս ապաստանական ոգին պէտք է գլուխ խնայարէն վիթխարի ուժին առաջ: Եւ 1876 ապրիլ 30-ին թիւրքերը Բանակիր-թիւթէի կրեք կողմէն ներս մտան ճիշդ կէտորէն յետոյ եւ Բանակիր-թիւթէի աւսու ու օր եւ յ ջ քաղաքական անկախութեան վերջ գրին: Սթրէշայի դիրքի եւ Պալապանօվի անտառի մտանքը 200-ի շատ թիւրք սպանաւորներ գտնուեցան, մեծ մասը կանանու որ զօրքերէ, իսկ Բանակիր-թիւթէի շուրջը մօտ 100: Բոլոր լազիտումներու մէջ ապաստաններէն հազիւ 100 հոգի միայն ընկան: Կռիւ ժամանակ թիւրքը գինուորներուն կ'օգնէին շրջակայքի բաշխողուկները: Ներքէնները, գնդակները եւ բռնաքները:

Քաղաքէն նահանջելու ժամանակ ապաստանութեան գլխաւոր գեկավարները ընակիչներու մասին ալ հոյպեցին: քաջ եւ յանդուգն հարիւրապետներու օրնութեանը քաղաքի բոլոր ընակիչները անտեսանելի տեւ զերէ փախցուցին լեռը եւ մէկն ալ զէնքը ձեռին գերի չկնկաւ: Քաղաքը մնացին այնպիսի մարտիկ, որոնք անկարող էին փախչելու, — ծերերը, հիւանդները, կիները եւ տղաները, որոնք յետոյ թիւրքերէն մ'որթուեցան Ամենէն վերջը (Առժամանակեայ կառավարութեան) անդամները հեռացան:

Թիւրքերը սիրելով քաղաքին սկսան իրենց սովորական բարբարոսութիւնները: Գիշեր-ցորեկ փաշաները ու սպանները աններելի կեղտոտ գազանութիւններ կընէին: Թնդանօթաձիգ զօրքերն եւս՝ շրջակայ բլուրներէն անողով քաղաքը ուրակոծելէն ու մոխիր դարձունելէն յետոյ, խուժեցին քաղաքը թալանելու եւ կողոպտելու: Թալանէն յետոյ սկսան հրդեհել տունները, խանութները եւ մթերանոցները: անողով շուկան կրակի ափն: Քաղաքի էն նշանաւոր շէնքերը, մօտ 400, եւ էն գեղեցիկները այրուեցան: Եկեղեցիները թնդանօթի ուռիներով փլուտակեցան դարձնելով բոլոր արձաթեայ ու ոսկեւու սպասները յափշտակեցին: անյուր բռնարարութիւններ ի գործ գրին, եկեղեցիներուն մէջ ապաստանած ժողովուրդը տանջեցին, շատերը մարտիրոսաբար սպանուեցին, նոյնիսկ 80-90 տարեկան ծերունիներ: Այդ գազանութիւնները մինչև 3 մայիս տեւեցին, իսկ կրակը մինչև 7 մայիս շարունակուեցաւ: Ամբողջ սպանաւորները կըան 384 հոգի արական սեռէ եւ 154 իրական սեռէ: Կառավարութիւնը կատարածէն, կողոպտուէն ու տանջանքներէն զատ՝ 4,000 ոսկի ալ արտասովոր սուգանք պահանջեց քաղաքէն:

Այդ ժամանակներն էր, որ օտարականները, ինչպէս եւ թղթակիցները, սկսան փոքր առ փոքր քաղաքը այցելել, տեղեկութիւններ հաւաքել, ուսումնասիրել կա-

ցութիւնը եւ վտանգաւորներուն ու աղքատներուն օգնութիւններ տար: Կառավարութեան զրկած քննիչ յանձնարողները տեղեկագիր մը ուղարկեց մեծ վիզիրին, որի արդեւորքն այն կողմ, որ Հաֆթը-Ֆաշա — Բանակիր-թիւթէի արխանազ Գեպըբուր հեղինակը — ստիպանութեան նախարարի պաշտօնի կանչուեցաւ:

Ապրիլեան շարժումներու արիւնալի սրամը կատարեալ ըլլալու համար, երկրորդ յեղափոխական նահանգի (Ֆիդայեզի) ապաստանութեան կազմակերպիչները ու գեկավարները պաշխօզուկներու ու կանոնաւոր զօրքերու ձևաւով թափուած այնքան անտեղ արեան գինը իրենց գլուխներով սուժեցին: Պէնքօվսքի մարմինը թէթէվէնի Պալքանը մնաց, իսկ գլուխը ձիւռ տապալկի մէջ դրած՝ Սօֆիայի քօնաքը բերին եւ հոն շօրեքուէն ցոյց տուին: Վօյսով եւ Իքօնօսով հալածական Նանիբազ գետի ալիքներէն խեղդուեցան, որոնց դիակները Պէշու գիւղի շուներէն փարսաւած գտնուեցան եւ Թօտայ Բապլէշքօվը, առաջին ապաստանութեան գլխաւոր յանուցաւորը, Կապրօվայի բանտին մէջ զարթիլէլ ատրճանակով անձնասպան կողաւ:

Աւելորդ չենք համարիլ նա բերել քանի մը մասնաւորութիւններ այդ գեկավարներին եղեանական վախճանի մասին:

Պէնքօվսքին, որ այնքան հպարտ ապրիլ 27-ին Պէլօվա մաս, թուրքիկ ապաստանումի մը դուխ անցած, իրեն հետ ունենալով խուժիկն խաչակիր Բիրիլ վանականը, մայիս 7-ին գլուխը քարոյ արած, ուժաթափ օտքերով թէթէվէնի վայրենի Պալքանի մէջուտը գտնուող Սեւ ժայռը ուղղուեցաւ: Եւ ճամբան ընկերներուն կըսէր: (Կուզէք գծոյքը սարէք դիս, աշխարհը ինձ համար գլուխ չունի): Մուսկին ուղեցոյցն էր հօտաղ Պայ-Սթանջօն, որու հետ եկան Սեւ-ժայռը եւ արջի մը որջը պահուտեցան: Պայ-Սթանջօն պէտք կըսէր զգուշութիւնները յիշեցնելէն յետոյ պէտք թէթէվէնի գնաց, որ ուտելիք ու ծպտելու հազուատ բերէ: Սակայն թէթէվէնի թիւրքերը Պայ-Սթանջօն կը ձերբակալեն եւ Սեւ-ժայռի մօտերը կը բերեն, որ վօյսօտային ուր պահուած ըլլալը ցցին: Պայ-Սթանջօն տանջանքներուն չզխմանալով կամարժէն ինքզինքը վիզ գետը կը նետէ եւ գանկը կը ջարդէ: Այսպիսի անմասն անձնախրութիւն մը հասարակ ու սղէտ հօտաղէ մը — պուլկար յեղափոխականի մը կեանքը վերկելու համար — պուլկար ամբողջ յեղափոխական պատմութեան մէջ մէկ պատկեր մը է:

Փախստականները — Պայ-Սթանջօյին մարտիրոսական մահէն բոլորովին անպիտակ, անոր ուշանալը տարբեր կերպով կը մեկնեն եւ որպէսզի դաւաճանութեան ծուղակի մէջ չիցան, կ'որոշեն անդրինին փոխել եւ քաղաքէն ելլելով կըսկսին այդ լայնատարած թէթէվէնի Պալքանի մէջ երկարօրէն զեղեկել: վերջապէս փաքիկ հիւրակ մը կը կատան, ուր բերեց հօտարածներ շիրենը կը դիմաւորին: Հօտաղներէն մէկն, Պայ-Նեհու, խօսք կուտայ: զանոնք ապահով ու անվտանգ թէթէվէնի հասցնել, բայց որոշ տեղ մը զանոնք առաջնորդելէ յետոյ մի ուրիշ հօտաղի կը յանձնէ:

Պայ-Նեհուէն իր թանկագին հիւրերը Պայ-Վըլիւ Մէլքթաթային (արջ) կը յանձնէ: Կազմնի ու խորհրդաւոր նշաններ ընելով, եւ յետոյ իր փարսախի ճամբան կը բռնէ, իսկ աս վերջինը՝ կեղծ ուրբախութեամբ իր ընկերով բարեկամները ընդունելով, կը խուսափայ անոնց ողջաւորով ազատուելուն հոգար:

Մայիս 11-ն էր: Հայր Բիրիլ մաղթանք կատարեց թէթէվէնի անթափանց անտառային խուռոյին մէջ, մինչդեռ աս: ատենները Պայ-Վըլիւ Մէլքթաթան եւ Պայ-Նեհու Լիսիցայթօ (աղուէս) սակարկութիւն կ'ընէին թիւրք կառավարութեան հետ: Պէնքօվսքի վօյսօտային գլուխին համար:

Սակարկութիւնը կըլլայ եւ դաւաճանութեան յատակագիծը կ'որոշուի: Սվինարքա գետի ծուղակը պատրաստելով լայնարանջ ու թիկնաւէտ ուժեղ բռնաքներ լեցուն շիշաններով Պէնքօվսքիին անցնելուն կըսպասեն ճակատագրական կամուրջի մը վրայ:

Անա ինչպէս Չ. Սթօյանովը Պէնջօլսքիին ընկերակցողը, սպանութեան արտար պատկերը կը նկարարդէ.

— Եթէ Աստուած ապ, մինչև իրկինամուտ առ ըլուրը կանցնինք, բաւ Պայ-Ալքիլու հայտէ, հիմակ շուտ-շուտ ջալենք. գիրար բռնեցէք, որ կամուրջէն չիյնաք, եւ աչ ծի վախնար:

Իրարու ետեւէ շարած, նախ մեր բարեբարը, յետոյ մենք կամուրջին վրայ ոտք գլխէն էս ետեւենէն կերթայի: Ինտը խոր չէր, բայց շատ արագընթաց էր: Մեր անցած անդէն խառ անասուը մեր պիտուն վերեւ սաղարթապատ ճիւղերէ անթափանցելի կանար կը կազմէր: Մեր բարեբարը ու Պէնջօլսքիին արդէն զիտայի ավին էին, իսկ մենք երեքնիս—Հայր Բիրիլը, Ստէֆօն եւ ես—զեւ կամուրջի վրան էինք: Ընդհանուր լուսութեան մէջ եւ ընրանս բայի, կրք նկատեցի որ գետի աջ կողմը այնպիսի երեւոյթներ կը տեսնէին, որ յայտնի կըլար կամուրջին նոր շինելը, որուն վրայ ուզեցի ընկերներուս ուշադրութիւնը հրահրել:

— Ինչ պէտք է պիտանա որ Զիլիպովէ չենք գտնուիր, Մարիցայի կամուրջի վրայ, այդ թէ՛ն է՛գէ՛ն: Պաշտօնը—Քոստէնա գետի վրայ, պատասխանեց Պէնջօլսքիին եւ ետեւը դարձաւ: Աս իր մնաս բարոյն էր . . եւ իր վերջին խօսքերն եղան միանգամայն:

Իր խօսքը հազիւ ընկողացած, վերիւ ազրարը, մեր բարեբարը, անձն էր ու հաւատարիմ վերելին, որ իրեն հայր կը կանչէինք, նշմարեցի որ հողի վրայ չորքտանիրի պէն սողալով, գնաց պղտած հասա-հաստ ծառի զամալը սլուցեցաւ: Գործը ինչ բան ըլլալը եւ չիրցայ խմանալ եւ վա՛ կարծեր որ ընկերներս ալ իմացած ըլլան: Հարցնելու պատրաստած ժամանակս—Թէ ինչո՞ւ ծերուկը գետնի վրայ դաւարեց, ընրանս կրկնեցաւ եւ լիզուս կորորդիս մէջ չորցաւ:

Քոստէն աւելի հրացաններ գետի երկու կողմէն ալ որոտընդոտ գոռացին եւ զնգալները մեղուններու պէս մեր վրայ խուժեցին. . .

... Սպաննորները խեղճ թաքստոցէն սլանալով, Պէնջօլսքիի գլուխը կարեցին եւ դէտիր Սվինարքայի թափերուն մէջ նեակելով, գլուխը յայթանակով թէթէվէն տարան:

Ետեւէն միայն վանական հայր Բիրիլը կենդանի ձերբակալուցաւ, իսկ Զահարի Սթօյանովը եւ Սթէֆօ դալմատեցին կարողացան իրենց անձը ձողարկել: Հայր Բիրիլը, Սօբօթ ծնած, որ Լէվսքիի համազօր գեր կատարած է պուկար յեղափոխութեան մէջ, արտակարգ դատաբանէն պիտանա շքեղապիտ բանտարկութեան դատապարտեցաւ իրեն ջօմիթ էին բաշ քէիսի, բայց բանտին մէջ հիւանդանալով մտաւ 15 ապրիլին 1877: Հայր Բիրիլին հետ բանտարկած էր նաև Սթօյան Զարմօլը, պուկար յեղափոխական կեդրոնական կոմիտէի հիմնադիրներէն մին, որ յետոյ ներքեւն արմանայաւ:

(Շարունակել)

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՎՍՏԱՆԻ ԲԻՐՈՅՆ ԿԱՍՏՈՒ Է՝
ՄԻՆԵՍՏԵՆՆԵՆ 71 Քրանք 40 ամթ., ՊԱՏԵՐՍՍՈՒՆՆԵՆ, ԶՈՒ-Ի միջոցով, Հայկ Գուռնի 2 դու, Շամիրամ 1, Գեղամ 50 սէնթ. — Ընդամենը 18 Քրանք: ԻՐԱ-ՆՆ-ՊՐՈՎԱՆՍՆԵՆ, Բ. Յա. միջոցով, 6 Քր., ՈՍԿԱՆԱՊԱՏԵՆՆԵՆ «Կոնսիլ» խմբէն 399 Քր. (150 ու), ՐՈՍՆՏԱՆԱՅՆՆԵՆՆԵՆ Առիւծէն 20 Քրանք: Գումար 512 Քրանք 40 ամթիւ:

ԲԵՐԳԻ ԿՈՒՄԻՏԵՆ՝
Հնգակնաններ 152 դահկան, Խոսրով 38, «Ապտամ» խ. 27, Գրիշէ 9 եւ 1 2, Կամարտ 8: Գումար 234 եւ 1 2 դահկան:
ՆԱԿԱՐԱՆԱԳՍՏԻ ԿԵԿ. ԿՈՒՄԻՏԵՆ՝
ԴԱՇՏԵՆ 100 ոտքի, Կարմիր քաղաքէն Մ.-ի ձնաքով 100 ու: Գումար 200 ոտքի:

ՊԱՍՏՆԵՆ Առժամանակեայ Կեդր. Կոմիտէն

ՄԱՎՅԻՆ ԿՈՒՄԻՏԵՆ «Շարքի հայունաց» խ. (1900 տարւայ մուտքով) 71. 50 ԼՎ, «Արեւելեան» խ. 17, դարձեալ 10. 50, դարձեալ 11. 50, դարձեալ 9ին- հաշիւէն 13. 50, «Արաման» խ. (1900 հոկտ. 1-է մինչև 1901 յունւար 31) 37. 10, Հեթում Գազի 14, ա. Եշերէն (ամսական 20 Քր. ոսկի, շոր ամսական) 80 Քր. ոսկի, Սիմէօն Ժերմուշի 12 ԼՎ, Բ. Ե. 16, Գ. Ն. 5, Մ. Գ. 3, Ասպետ 6: Գումար 247. 10 արծաթ ԼՎ եւ 80-ոսկի Փրանք: Մ. քաղաքէն «Սեղոք» խ. (1900-ի յոյ. եւ դեկտ.) 22, Գ. Գ. 5, Մ. Արծիւ 1900 տարւան համար 5: Գումար 99 ԼՎ:
Ռ. քաղաքի «Սեղոք» խ. 35 ԼՎ:
ՌՈՅՄԱՆՆԵՆ «Ամսուրաց» խ. 21. 20 ԼՎ:
Պ. քաղաքէն Մամսամիւր 100 ԼՎ, Ոմ 10, Համընցի 5, Մարտո 5, Մանուկ 2: Գումար 122 ԼՎ:
Ընդամենը 524. 30 ԼՎ եւ 80 Քրանք ոսկի:

ՊԱՍՏՆԵՆ ԿՈՒՄԻՏԵՆ

1901 Թ. յունւար Մահ 20 դահկան, Վահրամ եւ Սեպուհ 10. 50-ական, Նորտարի եւ Վեցհարւածեան 20-ական, «Արապօ» խ. 75, «Արաշեանեան» խ. անհատէն 5. 25: Փետրուար «Մառտի» խմբ. (երկու անգամով) 67. 25, «Որոտու» խմբ. 50, «Արապօ» խմբ. 65, Բորնի 11, Վեցհարւածեան, Արի եւ Ոմ 20-ական, Աստղ 8. 25: Մարտ Մնօ, Ջիւնդր եւ Վեցհարւածեան 20-ական, Հար (երկու անգամով) 6. 25, «Արապօ» խմբ. 80: Ապրիլ Պարոյր, Ժաղիկ եւ Գեքեղամ 6. 25-ական, «Փայլակ» խմբ. 15. 25, Բորնի 5, Մահ 42, Սեպուհ 11, Հար 2, Վեցհարւածեան 20, «Արապօ» խմբ. 70. 50, Գլխարկ 108, Ջիւնդր 10, Նարայն 80: ԱՐՇԱԿԱՆՆԵՆ «Ամսուրաց» խ. 60, «Երկիւղած» եւ «Ազգասէր» խմբերէն 47. 50, Ժեփիւրէն 40: Մայիս Վեցհարւածեան 20, «Արապօ» խմբ. 70, Գլխարկ 108, Հար 3, «Լեւոնի» խմբ. 108: Գումար 1427 դահկան (ողջ):

ԱՐՇԱԿԱՆՆԵՆԻ ինպատ Ատրպատականի Կ. Կոմիտէն ստացած է 210 դահկ. հետեւալ անձերից. Մեքսիկոնի 30 դահկան, Փիլիպոս, Շողակաթ, Միստամիի եւ Ժեփիւրի փախար 20-ական, Լուսատու, Վահագն, Արշալոյս, Հաշ, Սէր, Արիւծ, Հուր, Հուր եւ Ժիրար 10-ական, Ժեփիւրի 8ոյս 6, Կայտակ, Արամշապուհ, Հրայտ եւ Հայկազուն 5-ական, Ժեփիւրի Գեղամ 4, Գալմէտ 15, Վրդանէս 20:

Ընդամենը գումար 1672 դահկան (ողջ):

ՎՐԻՊԱԿ.— «Իրօշակ»-ի 1899 Թ. № 9-ի Ոսկէանքի ցանկին մէջ Պահլաւ 10 դահկ. ըսած է. պէտք է ըլլայ Վահրամ 10 դահկան:

Յ Ա Յ Ց Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Պուրկազի մէջ «Դաշնակցութեան» կորուած գէներու ջննութիւնը բ ո լ ո Ր յանցաւորներու եւ մեղակիցներու վերաբերմամբ վերջնականապէս փակելէն առաջ՝ կը խնդրէ այն ամէն անձերէն, որոնք ունին ունէ փաստայի խնդրի վերաբերեալ, հաղորդեն իրենց գիտցածները Կոմիտէին «Իրօշակ» խմբագրութեան միջոցով:
Կ. ՊՈՒՄԻ ԿԵԿ. ԿՈՒՄԻՏԵ

Ա Ջ Գ

Ափրիկեան Տրէպօլիսէն կը խնդրեն յայտարարել որ բախտասինդրութիւնով պարսպող ուրֆացի հայ մը, նամական գնալով, խեղճ բանտարկեալներուն անունով եկած նամակները կը ստանայ, զորս բանալով եւ նամակին պարունակութեան տեղեկանալով բուն տիրոջ անունով կը պատասխանէ անոր ծնողաց կամ բարեկամներուն եւ անոնցմէ փող կը կորզէ: Քանի մը խարդախութիւնները ճանչցած են: Անոնք, որոնք բանտարկեալներ ունին այդ կողմերը, լաւ ուշադրութիւն ընեն իրենց մարդոց գրին եւ շնարկին այդ նոր տիպի խաշագողէն: